

Դավիթ Ս. Գյուրջինյան
Բանասիր. գիյր. թեկնածու

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՐԻ ՀԱՅԵՐԵՆ ԼԵԶՎԱՆՈՒՆՆԵՐԸ*

Բանալի բառեր – V դարի հայերենի բառապաշար, լեզվանուն, բառույթով արտահայտված լեզվանուն, բառակապակցությամբ արտահայտված լեզվանուն, լեզվանունների տարբերակայնություն, հնացած լեզվանուն, **-արէն/-երէն** վերջածանց, բառապաշարային տեղաշարժ:

Մուտք

V դարում՝ մաշտոցյան գրերի գյուտից հետո, սկիզբ է դրվել հայոց գրավոր մշակույթին: V դարի հայերեն ինքնուրույն և թարգմանական գրականության մեջ գործածված է հարուստ և բազմազան բառապաշար, որի միջոցով արտահայտվում են այդ ժամանակաշրջանի Հայաստանի և հարակից երկրների պետական և հասարակական կառուցվածքի, վարչատարածքային բաժանման, հարևան ժողովուրդների հետ Հայաստանի ռազմական, քաղաքական, դիվանագիտական և այլ հարաբերությունների, տնտեսական գործունեության, կրոնակեղեցական կյանքի, ինչպես նաև գիտության, մշակույթի տարբեր բնագավառների այլազան իրողություններ¹:

* Հողվածն ընդունվել է տպագրության 23.07.2023:

1 V դարի հայերենի բառապաշարին, բառակազմությանը, լեզվի և ոճի հարցերին նվիրված բազմաթիվ աշխատություններ կան՝ **Առաքելյան Վ.**, Ակնարկներ հայոց գրական լեզվի պատմության (V դար), Եր., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1981, **Առաքելյան Վ.**, Հինգերորդ դարի հայ թարգմանական գրականության լեզուն և ոճը, Եր., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1984, **Հովհաննիսյան Լ.**, Գրաբարի բառապաշարը (V դար), Եր., ՀՀ ԳԱԱ հրատ., 2006, **Յովհաննիսեան Լ.**, Հայ թարգմանական

Այդ բառամթերքի նկատելի մասը, իհարկե, գալիս է նախագրային շրջանից²:

Առ այսօր լեզվաբանների ուշադրությունից դուրս են մնացել V դարի հայերենում գործածված լեզվանունները: Այդ լեզվանունների ուսումնասիրությունը կարևոր է, քանի որ դրանք կարող են որոշակի գաղափար տալ Հայաստանի և հայերի ռազմաքաղաքական ու դիվանագիտական հարաբերությունների, գիտամշակութային ու կրոնադավանաբանական առնչությունների և այլ հարցերի մասին, ինչպես նաև ամբողջացնել V դարի հայերենի բառային կազմի պատկերը: Միաժամանակ կարող ենք հետևել հայերենի լեզվանունների պատմական զարգացմանը:

Մեր խնդիրն է պարզել, թե ի՞նչ լեզվանուններ են վկայվել V դարի հայերենում, դրանք ի՞նչպիսի՜ կառուցվածք և կազմություն ունեն, տարբերակային ի՞նչ ձևեր են շրջանառվել, կենդանի՞, թե՞ մեռած լեզուների անուններ են, ո՞ր հեղինակների խոսքում և կամ ո՞ր թարգմանություններում են գործածվել, գրաբարի բառարաններում ինչպե՞ս են արձանագրվել և արդյոք փոխանցվել են նոր հայերենին:

1. Լեզվանունների կառուցվածքային տեսակները

Առանձնացվում է V դարից գրավոր վկայված հայերեն լեզվանունների կառուցվածքային երկու տեսակ՝ ա) բառակապակցական և բ) բառային: Մեր կարծիքով՝ անվանման գործընթացի առաջին քայլը բառակապակցություն կազմելն է, հաջորդ քայլը՝ բառակազմությունը:

Ա. Բառակապակցական լեզվանուններ

Բառակապակցությամբ արտահայտված լեզվանունների մեջ առանձնացնում ենք մի քանի կառույցներ, որոնց հիման վրա կազմվել են տարբեր լեզուների անուններ:

գրականության բառապաշարը (V դար), Եր., Երևանի պետական համալսարանի հրատ., 2007, **Հովսեփյան Լ.**, Գրաբարի բառակազմությունը, Եր., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1987, **Հովսեփյան Լ.**, Ռազմական բառապաշարը Մովսես Խորենացու «Պատմություն Հայոց» երկում, «ՎԷՆ», Եր., 2018, N 3, էջ 105-151 և այլն:
 2 Տե՛ս **Ջահուկյան Գ.**, Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Եր., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1987:

ա) Անեզական տեղանվան սեռական հոլովածն+լեզու:

• «Վասն որոյ եղ ի մտի հնարել գտանել նշանագիրս **Հայոց լեզուիս**» (Խոր.)³:

Հայոց լեզու «Հայքի կամ հայերի լեզուն» = **հայերեն**:

Հայոց-ը **Հայք** անեզական տեղանվան սեռական հոլովածնն է, որը համանունական կապի մեջ է **հայք** «հայեր» հոգնակիի **հայոց** սեռական հոլովածնի հետ: Նույնը կարող ենք ասել նաև նշված կառուցվածքն ունեցող բաղադրյալ մյուս լեզվանունների առնչությամբ:

• «Պերոզ անուանեցաւ, որ է յաղթող, քանզի յառաջ անուանէր Վաղեգեսոս ի **յունաց լեզուն**» (Խոր., էջ 197):

Յունաց լեզու «Հունաստանի (գրաբար՝ **Յոյնք**) կամ հույների լեզուն» = **հունարեն**:

Յունաց լեզու անվանումն աշխարհաբար թարգմանվել է «հունարեն լեզու». «Պերոզ կոչումն ստացավ, որ նշանակում է հաղթող, որովհետև նա առաջ **հունարեն լեզվով** կոչվում էր Վաղեգեսոս»⁴: Լեզվական կանոնի տեսանկյունից **լեզու** բառի հարադրումը արտառոց չպիտի համարել. արևմտահայերենում այսօր էլ ընդունելի է «լեզվանուն+լեզու» կառույցը:

• «Քանզի սատանայ յերբայեցոց և **յԱսորոց լեզուէ** խոտորեալ թարգմանի» (Եզն.)⁵:

Ասորոց լեզու «Ասորիքի կամ ասորիների լեզուն» = **ասորերեն**:

Նկատի առնենք, որ երկիրը գրաբար անվանում էին նաև **երկիր Ասորոց**⁶:

3 **Մովսէս Խորենացի**, Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը և ներածութիւնը՝ Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, Եր., Հայկական ԽՍՀ ԳԱ հրատ., 1991, էջ 317 (այսուհետև՝ Խոր., որը և էջը՝ տեքստում):

4 **Մովսէս Խորենացի**, Պատմություն Հայոց, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները՝ Ստ. Մալխասյանցի, Եր., «Հայաստան», 1968, էջ 189 (այսուհետև՝ Խորենացի, որը և էջը՝ տեքստում):

5 **Եզնիկ Կողբացի**, Եղծ աղանդոց, թարգմանությունը և ծանոթագրությունները՝ Ա. Ա. Աբրահամյանի, Եր., Երևանի համալսարանի հրատ., 1994, էջ 42-44 (այսուհետև՝ Եզն., որը և էջը՝ տեքստում): Գրչագրում գործածվել են **յերբեացոց**, **յերբանցոց** և **յասորոց** ձևերը (տե՛ս նույն տեղում, էջ 265, 276): Կողբացու երկի վերջին հրատարակության մեջ դրանք արտահայտվել են այսպես՝ **յերբայեցոց**, **յերբայեցլոց** և **յԱսորլոց** (տե՛ս «Մատենագիրք Հայոց», հատ. Ա: Ե. դար, Անթիլիաս, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւն, 2003, էջ 501, 445):

«Անեզական տեղանվան սեռական հոլովածն+**լեզու**» կառուցվածքն ունեցող լեզվանուններից **հայոց լեզու**-ն միակն է, որ լիարժեք գործածվում է նաև աշխարհաբարում, տեղ ունի լեզուների հայերեն գիտական անվանացանկում (**հայերեն**-ի հետ իհարկե):

Հարկ է նշել, որ համանման կառուցվածք ունեցող **պարսից լեզու** (< **Պարսք**) և **վրաց լեզու** (< **Վիրք**) բաղադրյալ անվանումները V դարում չեն վկայվել. դրանք հայերենի զարգացման հետագա շրջանների գրաբարատիպ իրողություններ են:

բ) Ժողովրդանվան հոգնակի սեռական հոլովածն+**լեզու**:

Որպես կանոն, ժողովրդի ներկայացուցչի անվանումն ածանցավոր է (**-եցի, -ացի** ածանցներով):

- «... գի **յերրայեցուց լեզու** երկին չմարթի ասել...» (Եզն., էջ 212):

Երրայեցուց լեզու «Երրայեցիների լեզուն» = **Երրայեցերեն**:

Սրա ուղղագրական տարբերակը կա. հմմտ. «Իբրև լուան եթէ **Հերրայեցուց լեզուան** բարբառեցաւ նոցա՝ առաւել եւս դադարեցին ի լռութիւն» (Գործք առաքելոց 22.2):

Եզնիկի երկի արևելահայերեն թարգմանության մեջ **Երրայեցուց լեզու** բաղադրյալ անվանման համարժեքը մի դեպքում բառով արտահայտված լեզվանունն է՝ **Երրայեցերեն** (լեզու). «... որովհետև **Երրայեցերեն** և ասորերեն լեզուներով սատանա նշանակում է խտորված» (Եզն., էջ 45), մյուս դեպքում՝ գրաբարյան կառուցվածքի հետևողությամբ կիրառված **Երրայեցիների լեզու** բառակապակցությունը. «... **Երրայեցիների լեզվով** չի կարելի ասել «երկին»» (Եզն., էջ 213): Վերջինը, իհարկե, կառուցվածքով և մտածողությամբ ավելի հարազատ է գրաբարին:

- «... որովք ստեղծ նշանագիրս կոկորդալսուս աղխազուր խժական խեցբեկագունին այնորիկ **Գարգարացուց լեզուին**» (Խոր., էջ 329):

Գարգարացի բառը բավական զբաղեցրել է հայ և օտարագի գիտնականներին: Կարծիք կա, որ «գարգարացի» են կոչել հյուսիսկովկասյան վայրի ցեղերին, որոնց մի մասը հետագայում տեղա-

6 Տե՛ս Հ. Գաբրիել Անտիքեան, հ. Խաչատուր Սիրմէլեան, հ. Մկրտիչ Ազեբեան, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հատ. Ա, Վենետիկ, Ս. Ղազար, 1836, էջ 314:

փոխվել է Կուր գետից հարավ, և Մեսրոպ Մաշտոցը նշանագրեր է ստեղծել աղվաներենի գարգարական խոսվածքի համար⁷: Այս հանգամանքը թույլ է տալիս ենթադրել, որ գարգարացիներն աղվանական ցեղերի միության մեջ մշակութային առավել բարձր և առաջատար դիրք են զբաղեցրել (ուտիների հետ)⁸:

Կարծիք կա նաև, որ Խորենացու հիշատակած գարգարացիներն աղվաններ չէին, այլ «գարգարացի»-ն ձախակողմյան Աղվանքի և հարևան լեռնային շրջանի բնակչությանը Խորենացու տված քամահրական անվանումն է⁹: Միաժամանակ պիտի հաշվի առնենք, որ նույն ժողովրդանունով աշխարհագրական անուններ էլ կան հիշատակված նաև Խորենացու երկում և առհասարակ՝ **Գարգար, Գարգարացուց դաշտ, Գարգարացուց երկիր**¹⁰: Մի՞թե սրանք էլ են քամահրական երանգով: Քիչ հավանական է:

Ամեն դեպքում հստակ է, որ Խորենացու երկում գործածված **գարգարացուց լեզու**-ն աղվաներենի կամ նրա մի խոսվածքի անվանումն է:

• «... կալ ի տաճարին առաջի թագաւորին. եւ ուսուցանել նոցա դպրութիւն եւ **զլեզու Քաղղէացուց**» (Դան. 1.4)¹¹:

Քաղղէացուց լեզու – **քաղղեերեն/քաղղեարեն**, որ քաղղեացիների՝ Քաղղեայի (ներկայիս Իրաքի) բնակչության լեզուն է: Ակադեմիական բացատրական բառարանը **քաղղեերեն** բառահոդվածում գործածել է **քաղղեական լեզու** բաղադրյալ անվանումը՝ լեզվանունը բացատրելով հետևյալ կերպ՝ «Միջագետքում տարածված հին՝ մեռած լեզու»¹²:

7 Տե՛ս **Тревел К.**, Очерки по истории и культуре Кавказской Албании IV в. до н. э. – VII в. н. э., М.-Л., изд. Академии наук СССР, 1959, էջ 46:

8 Տե՛ս նույն տեղում, էջ 49:

9 Տե՛ս **Акопян А.**, Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Ер., изд. АН Армянской ССР, 1987, էջ 73-74:

10 Հմմտ. **Հակոբյան Թ., Մելիք-Քախչյան Ստ., Բարսեղյան Հ.**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատ. 1, Եր., Երևանի համալսարանի հրատ., 1986, էջ 808:

11 Գրաբար Աստվածաշնչից մեջբերումները հետևյալ հրատարակությունից են՝ Աստուածաշունչ մատենան Հին եւ Նոր Կտակարանաց, Եր., Հայաստանի աստուածաշնչային ընկերություն, 1997:

12 «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», հատ. 4, Եր., Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատ., 1980, էջ 698: Նույն բառարանը **քաղղեացի**-ն բացատրում է որպես «բաբելացի», իսկ «լեզվաբանական բառարանը» **քաղղեերեն/քաղղիերեն**-ը բացատրում է որպես «**արքաղերեն**» (տե՛ս

Լեզվանվան քերականական կառույցը՝ «Ժողովրդի ներկայացուցչի անվան հոգն. սեռ. հոլովածն-**լեզու**», պահպանվել է Աստվածաշնչի՝ գրաբարից արված արևելահայերեն թարգմանության մեջ՝ **քաղղէացիների լեզու**¹³: Նույն կառույցն է (**Քաղղէացիներու լեզու/Քաղղէացիների լեզու**) նաև Սուրբ Գրքի՝ XIX դարի առաջին կեսին երրայական և հունական բնագրերից արված արևմտահայերեն և արևելահայերեն թարգմանություններում: Ի դեպ, այդ մոտեցումը պահպանվել է նաև սրանց նոր՝ վերամշակված հրատարակություններում¹⁴: Այնուամենայնիվ, ակնհայտ է գրաբարյան կառույցի ազդեցությունը: Կարող ենք եզրակացնել, որ Սուրբ Գրքում նախընտրելի է լեզվանվան բառակապակցական տարբերակը. բառային տարբերակները՝ **քաղղերեն/քաղղեարեն**, այնտեղ տեղ չունեն:

• «Յաւոր յայնմիկ եղիցին հինգ քաղաք յերկրին Եգիպտացոց՝ որ խօսիցին **գՔանանացոց լեզուն**» (Եսայի 19.18):

Կառույցը պահպանվել է գրաբարից արևելահայերեն թարգմանության մեջ՝ **քանանացիների լեզու**: Նկատելի է, որ երբ թարգմանության հիմքը գրաբարը չէ, գործածվում է **Քանանի լեզու** բառակապակցությունը:

Քանանացոց լեզու «քանանացիների՝ Քանանի երկրի լեզուն» – **քանաներեն** «Պաղեստինի և Սիրիայի հնագույն բնակիչների՝ քանանացիների լեզուն, պատկանում է սեմական լեզուների հյուսիսարևմտյան ծյուղին», որով հավանաբար խոսել են նաև Փյունիկիայում, ինչպես նաև փյունիկեցի գաղթականության շրջանում¹⁵. քանա-

Պետրոսյան Հ., Գալստյան Ս., Ղարաբյուլյան Թ., Լեզվաբանական բառարան, Եր., Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատ., 1975, էջ 307 (այսուհետև՝ «Լեզվաբանական բառարան»):

13 Տե՛ս Աստուածաշունչ Մատեան Հին եւ Նոր Կտակարանների, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Հայաստանի աստուածաշնչային ընկերություն, 1994:

14 Տե՛ս Աստվածաշունչ Մատյան Հին և Նոր Կտակարանների, թարգմանություն (Նոր Արարատ), Եր., Հայաստանի աստուածաշնչային ընկերություն, 2018, Աստուածաշունչ Գիրք Հին եւ Նոր Կտակարաններու, եբրայերէն եւ յունարէն բնագիրներէն թարգմանուած, Պէյրութ, Լիբանանի Աստուածաշունչի ընկերություն, 2001:

15 Տե՛ս «Լեզվաբանական բառարան», էջ 307, «Բառարան Սուրբ Գրոց, հանդերձ պատկերօք, աշխարհացոցօք եւ տախտակօք», Կ. Պօլիս, տպ. Յ. Պօյաձեան, 1881, էջ 234:

ներեն մի շարք բառեր ավանդվել են մ. թ. ա. 1400–ական թթ. բևեռագիր թղթակցություններում¹⁶:

զ) Ժողովրդանվան հոգնակի սեռական հոլովածն+**բարբառ**:

• «Արդ՝ զայս ամենայն խաւսեցաւ սուրբն Գայիանէ ի **բարբառ Հոռմայեցոց**», «... լսէին զայն ամենայն ի **բարբառ Հոռմայեցոց**» (Ագաթ.)¹⁷:

Բարբառ Հոռմայեցոց «Հոռմի բնակիչների լեզուն» = **լատիններեն**:

Ագաթանգեղոսի երկի ձեռագրերի մեծ մասում հանդիպում է **բարբառ Հոռմայեցոց** ձևով, ինչպես նաև **հոռմ**, **հոռմաեցոց**, **հոռվմայեցոց**, **հոռոմայեցոց**, **հոռոմայեցոց** տարբերակներով (Ագաթ., էջ 1396):

Հոռոմ բառն առաջացել է **Հոռմ** տեղանունից և նշանակել է «հոռ(վ)մայեցի՝ Հոռմի բնակիչ, այսինքն՝ լատին, լատինացի»¹⁸:

Ագաթանգեղոսի երկում երկու անգամ գործածված **հոռմայեցոց բարբառ** բառակապակցությունը մատենագրի բնագրային համաբարբառում չի առանձնացվել որպես լեզվանուն և գետնովել է **հոռվմայեցիք** գլխաբառի ներքո (**քաղաքն հոռվմայեցոց** կապակցության հետ): Առանձին տրվել է **Հոռվմայեցոց աշխարհ** բաղադրյալ անվանումը՝ իբրև երկրանուն¹⁹:

Ի դեպ, Ագաթանգեղոսի երկի արևելահայերեն թարգմանության մեջ ժամանակաշրջանի գունեղանգը պահպանելու նպատակով գործածվել է ժողովուրդ նշող բաղադրիչը, և լեզվանունը ներկայացել է **հոռմայեցիների լեզու** ձևով²⁰: Կառույցն արդի հայերենին առհասարակ բնորոշ չէ:

16 Տե՛ս **Աճառյան Հ.**, Լիակատար քերականություն հայոց լեզվի, համեմատությամբ 562 լեզուների: Ներածություն, Եր., Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 1955, էջ 519–520:

17 **Ագաթանգեղոս**, Պատմություն Հայոց, «Մատենագիրք Հայոց», հատ. Բ: Ե. դար, Աթիլիաս, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսություն, 2003, էջ 1396 (այսուհետև՝ Ագաթ., որը և էջը՝ տեքստում):

18 **Մալխասեանց Ստ.**, Հայերէն բացատրական բառարան, հատ. 3, Եր., Հայկական ՍՍՌ պետական հրատ., 1944, էջ 131:

19 Տե՛ս «Հայկական համաբարբառ», IV/II. Ագաթանգեղոս, Պատմություն Հայոց, Եր., 1973, էջ 60:

20 Տե՛ս **Ագաթանգեղոս**, Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները՝ Ա. Տեր-Ղևոնդյանի, Եր., Երևանի համալսարանի հրատ., 1983, էջ III (այսուհետև՝ Ագաթանգեղոս, որը և էջը՝ տեքստում):

• «Այս մատենան հրամանաւ Աղեքսանդրի ի **Քաղղեացոց բարբառոյ** փոխեալ ի յոյն» (Խոր., էջ 31):

Քաղղեացոց բարբառ-ը համարժեք է **քաղղեացոց լեզու** անվանը, որ **քաղղեարեն/քաղղերեն**-ն է: Արևելահայերեն թարգմանության տարբեր հրատարակություններում գործածվել են այլ կառուցվածք ունցող **քաղղեարեն լեզու** և **քաղղերեն լեզու** լեզվանունները²¹:

Քաղղեացոց բարբառ լեզվանվան թելադրանքով տվյալ խոսքաշարում լեզվանուն է ընկալվում նաև **ի յոյն** նախդրավոր կառույցը. **լեզու** կամ **բարբառ** բաղադրիչը կրկնությունից խուսափելու նպատակով օրինաչափորեն զեղչվել է: Ուստի միանգամայն ճիշտ է հետևյալ թարգմանությունը. «Այս մատյանն Աղեքսանդրի հրամանով քաղղեարեն լեզվից թարգմանված է հունարենի» (Խորենացի, էջ 37):

դ) Ժողովրդանուն (ուղիղ ձևով)+**լեզու**:

Այս կառույցի դեպքում սովորաբար կիրառվում են կազմությանը պարզ ժողովրդանուններ:

• «.... ետ թարգմանել երանելի վարդապետն մեր Մաշտոց ի **հայ լեզու**» (Խոր., էջ 120), «.... առնէ նոցա նշանագիրս հանդերձ Զաղայի ոմամբ թարգմանաւ հելլէն և **հայ լեզուի**» (Խոր., էջ 328):

Հայ լեզու = հայոց լեզու, հայերեն:

Աշխարհաբար թարգմանության մեջ մի դեպքում **հայ լեզու**-ն դարձել է **հայերեն**. «Եվ մերձավոր վկա ու երաշխավոր թող լինի Եվսեբիոս Կեսարացու եկեղեցական (պատմության) գիրքը, որը մեր երանելի ուսուցիչը Մաշտոց՝ թարգմանել տվեց **հայերեն**» (Խորենացի, էջ 137), մյուս դեպքում պահպանվել է Պատմահոր գործածած **հայ լեզու** անվանումը. «Զաղայի հետ, որ հունարեն և **հայ լեզուների** թարգմանիչ էր» (Խորենացի, էջ 407):

Հայ լեզու անվանումն աշխարհաբարում առհասարակ գործածվում է գեղարվեստական և հրապարակախոսական խոսքում, բայց ո՛չ գիտական, պաշտոնական կամ առօրյա:

21 Տե՛ս **Մովսես Խորենացի**, Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմ. և մեկնաբանությունները՝ Ստ. Մալխասյանի, Եր., Երևանի համալսարանի հրատ., 1981, էջ 36, **Մովսես Խորենացի**, Պատմություն Հայոց, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները՝ ակադ. Ստ. Մալխասյանի, խմբագիրներ՝ Վ. Դ. Առաքելյան, Ա. Ա. Աբրահամյան, Եր., «Հայաստան», 1968, էջ 84:

Որոշ խոսքաշարերում լեզվանուն բառակապակցությունը նշանակում է տվյալ լեզվով խոսող հանրություն: Օրինակ՝ այդպես է այստեղ. «Եւ սգային ամենայն ազատք եւ շինականք ծագէ ի ծագ ամենայն սահմանաց երկրին Հայոց եւ շինականք ամենայն բնակիչք տանն Թորգոմայ, **հայ լեզուն** առ հասարակ»²²:

• «Եւ յայտ անտի է, զի ելթանասնիցն թարգմանեալ ի **յոյն լեզու**, ասեն ի սկզբանէ արար Աստուած զերկին և զերկիր», «... բանն ի **յոյն լեզու** յերկոսին հարկանէ» (Եզն., էջ 212) և «... **յոյն լեզու** ուսեալ՝ պատմագրեաց զգործս Շապիոյ և Յուլիանու» (Խոր., էջ 206):

Յոյն լեզու = հունարեն:

V դարում ընդունված **յոյն լեզու** բաղադրյալ անվանումը, ի տարբերություն գեղարվեստական և հրապարակախոսական խոսքում հանդիպող **հայ լեզու** բառակապակցության, չփոխանցվեց աշխարհաբարին: Նկատենք, որ Խորենացու գործածած **յոյն լեզու**-ն աշխարհաբարում դարձել է «**հունարեն** սովորելով....» (Խորենացի, էջ 251):

Որպես տարբերակային անվանում՝ հունարենի համար գործածվել է նաև **հելլեն լեզու** բառակապակցությունը: Օրինակ՝ «... թարգմանաւ **հելլէն** եւ **հայ լեզուի**» (Խոր., էջ 328): Տարբերակային այս ձևի առաջացման հիմք է դարձել այն, որ հին հույներին նաև «հելլեն» էին անվանում:

• «... երկին չմարթի ասել, որպէս եւ ոչ **յասորի լեզու**՝ ջուր կամ երկին» և «Եւ **յասորի լեզու** չմարթի երկին ասել, ասէ....» (Եզն., էջ 212):

Ասորի լեզու/լեզու ասորի = ասորերեն:

Նկատելի է, որ լեզվանվան ժողովրդանուն բաղադրիչը **լեզու** բառի նկատմամբ կարող է դրվել տարբեր շարադասությամբ՝ նախադաս և հետադաս²³: Հմնտ. «... փոխեաց զամենայն ինչ ի **լեզու**

22 **Փաստոս Բուզանդ**, Պատմութիւն Հայոց, «Մատենագիրք Հայոց», հատ. Ա, էջ 399 (այսուհետև՝ Բուզ., որը և էջը՝ տեքստում):

23 Հայերենագիտության մեջ տարբեր կարծիքներ կան գոյական որոշի նախադաս կամ հետադաս շարադասության հաճախականության վերաբերյալ. քերականների և լեզվաբանների մի մասը կարծում է, որ գերակշռում է նախադաս կիրառությունը, մյուս մասը գերակշիռ է համարում հետադաս կիրառությունը, երրորդ խմբի կարծիքով՝ երկու դիրքերն էլ կիրառական են, բայց արդեն V դարում միտում է նկատվում նախադասին անցնելու (հմնտ. **Ավետիսյան Հ.**, Որոշիչ-որոշյալի կապակցությունը գրաբարում, Եր., Երևանի համալսարանի հրատ., 1972, էջ 89-106, **Մկրտչյան Էդ.**,

ասորի» (Խոր., էջ 201) և «... լինէր պաշտանէիցն աշխատութիւն եւ ժողովրդոցն անշահութիւն յանլրութենէ **լեզուին ասորոյ»** (Փարպ.)²⁴: Լեզվանունների պարագայում գերակշռում է ժողովրդանուն բաղադրիչի նախադաս դիրքը²⁵:

• «Գրեաց ի **լեզու հռոմ»** (Եվս.)²⁶:

Հռոմ լեզու = հռոմարէն/հռոմերէն «լատիներեն»:

Ատրերենից արված մի թարգմանության մեջ գործածված է **Հռոմ լեզու** տարբերակը. «... ընկալաւ զանունն յարքայէ անտի ըստ **Հռոմ լեզուի»** (Եվս.)²⁷:

Ասվեց, որ **հռոմ** բառն առաջացել է **Հռոմ** տեղանունից: Երբ Բյուզանդական կայսրության մայրաքաղաքը դարձավ Բյուզանդիոնը, սկսեցին «հռոմ» կոչել հույներին, և **հռոմ լեզու** ասելով հասկանում էին ոչ միայն «լատիներեն», այլև «նոր հունարեն» (բյուզանդական ժամանակից)՝ ուռումներն²⁸:

Ուշագրավ են այն խոսքաշարերը, որոնցում ածանցավոր ժողովրդանվան կողքին գործածվել է նաև կազմությամբ պարզ այնպիսի ժողովրդանուն, որի ածանցավոր տարբերակը ևս գոյություն ունի, ինչպես՝ «... զի **յերբայեցոց լեզու** երկին չմարթի ասել, որպէս և ոչ **յասորի լեզու**՝ ջուր կամ երկին» (Եզն., էջ 212): Հմնտ. **ասորի լեզու** և **ասորոց լեզու**:

ե) Ժողովրդի անուն+բարբառ:

Հետադաս որոշի գործածությունը գրաբարում, «Բանբեր Երևանի համալսարանի», Եր., 1998, N 3, էջ 156):

24 **Ղազար Փարպեցի**, Պատմութիւն Հայոց, «Մատենագիրք Հայոց», հատ. Բ, էջ 2212 (այսուհետև՝ Փարպ., որը և էջը՝ տեքստում):

25 Նկատվել է, որ գրաբարում իրանիշ հասարակ անուններով արտահայտված նախադաս որոշիչները սովորաբար չեն համաձայնում որոշյալի հետ, սակայն թե՛ նախադաս և թե՛ հետադաս դիրքերում կան բացառություններ (տե՛ս **Ավետիսյան Հ.**, նշվ. աշխ., էջ 106, **Քոսյան Վ.**, Գրաբարի բառակապակցությունները, Եր., Հայկական ՄՍՀ ԳԱ հրատ., 1980, էջ 12):

26 **Հ. Գարրիել Աւետիքեան, Կ. Խաչատուր Սիրմէլեան, Կ. Մկրտիչ Աւգերեան**, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հատ. Բ, Վենետիկ, Ս. Ղազար, 1837, էջ 120 (ըստ Եվսեբիոսի Պատմության) (այսուհետև՝ ՆՀԲ, հատորը և էջը՝ տեքստում):

27 **Եսեբիոս Կեսարացի**, Պատմութիւն եկեղեցոյ յեղեալ յասորոյն ի հայ ի հինգերորդ դարու, Վենետիկ, Ս. Ղազար, 1877, էջ 352-353 (այսուհետև՝ Եվս., որը և էջը՝ տեքստում): Հմնտ. «... այն որ գրեացն ի **լեզու հռոմ** զխօսս պատասխանոյ հաւատոց մերոց» (Եվս., էջ 353):

28 Հմնտ. **Մալխասեանց Ստ.**, Հայերէն բացատրական բառարան, հատ. 3, էջ 131:

Ժողովրդանունը կարող է լինել ինչպես պարզ արմատական, այնպես էլ ածանցավոր, և դա էական նշանակություն չունի: Թեպետ նկատելի է, որ արմատական բաղադրիչներով կազմվածները գերակշռում են:

• «... եւ անուն նորա Երբայեցերէն Աղբադոն, որ կոչի ի **Հայ բարբառ** Կորուստ» (Յայտ. 9.11):

Հայ բարբառ = **հայերեն**:

• «Ի **բարբառ հոռոմ**» (ՆՀԲ)²⁹, «... տուաւ յինքնակալէն անունս Շանթաձիգ՝ ըստ **Հոռոմ բարբառոյն**» (Եվս., էջ 353):

Հոռոմ բարբառ = **հոռոմարէն/հոռոմերեն** «լատիներեն»:

Ինչպես ասացինք, ժողովրդանունը կարող է լինել նաև ածանցավոր: Այսպես՝ «... ըստ իւրում անուանակոչութեանն Կոստանդնուպոլիս անուանէր, որ թարգմանի հայերէն՝ Կոստանդիանոսի քաղաք. զոր ոմանք ըստ **հռովմայեցի բարբառոյն** Պաղատն ասեն» (Փարս., էջ 2203-2204):

• «... ի հռովմէականէն յեղեալ ի **Յոյն բարբառ**» (Եվս., էջ 744):

Յոյն բարբառ = **հունարեն**:

Միևնույն խոսքաշարում հանդիպում են համանման կառույցներ՝ **լեզու** և **բարբառ** միավորների միաժամանակյա գործածությամբ: Օրինակներ Ղազար Փարպեցուց. «... ոչ զարէին համարձակել յայսպիսի սաստիկ եւ կարեւոր գործ, թարգմանել գիրս ի **յոյն լեզուոյն** ի **հայ բարբառս**» և «... սկսան աղաչել զսուրբ կաթողիկոսն Սահակ ... թարգմանել զաստուածաշունչ կտակարանս ի **յոյն լեզուոյ** ի **հայ բարբառս**» (Փարս., էջ 2214): Դա թերևս պիտի կապել գրաբարում ընդունված ոճական հնարի՝ պեսպիսության հետ, երբ հեղինակները հաճախ միևնույն իմաստը կրկնում են տարբեր՝ նույնանիշ կամ հոմանիշ բառերով³⁰: Տվյալ դեպքում դրանք **լեզու** և **բարբառ** բառերն են:

զ) Ժողովրդանուն+բան:

Հարկ է նշել, որ **բան** նշանակում է ոչ միայն «խոսք», այլև «լեզու, բարբառ» (ՆՀԲ, հատ. Ա, էջ 432):

29 Հ. Գաբրիել Աւետիքեան, Կ. Խաչատուր Սիրմէլեան, Կ. Մկրտիչ Ազերեան, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հատ. Ա, էջ 442, Հ. Մանուէլ վրդ. Զախջախեան, Բառգիրք ի բարբառ հայ եւ իտալական, Վենետիկ, Ս. Ղազար, 1837, էջ 291:

30 Տե՛ս Աբրահամյան Ա., Գրաբարի ձեռնարկ, չորրորդ հրատ., Եր., «Լույս», 1976, էջ 394:

• «Եւ իսկոյն ի թարգմանութիւն ձեռն արկեալ, խորհրդաբար սկսեալ յԱռակացն, բովանդակելով զքսան և զերկու յայտնիսն, և զնոր Կտակս յեղու ի **հայ բան**» (Խոր., էջ 327):

Հայ բան = հայերեն, հայոց լեզու:

Այս կառույցը V դարում տարածված չի եղել, հանդիպում է Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» երկում: Ուշագրավ է, որ Պատմահոր համաբարբառում **հայ բան** բառահոդված է առանձնացվել³¹: Սա նշանակում է, որ այն բաղադրյալ անվանում է ըմբռնվել և ոչ թե ազատ բառակապակցություն: Աշխարհաբար որպես լեզվանուն է ներկայացվել. «Եվ իսկոյն ձեռնարկեցին թարգմանության, խորհրդաբար սկսելով (Մողոմննի) Առակներից, ամբողջ քսաներկու հայտնի գրքերը և նոր կտակարանը փոխադրում է **հայերեն լեզվի**» (Խորենացի, էջ 405):

• «Փոխեաց զամենայն ինչ ի լեզու ասորի. որ և ապա անտի յեղաւ ի **յոյն բան**» (Խոր., էջ 201): Ի դեպ, Հայկազյան բառարանը **բան** բառի «լեզու, բարբառ» իմաստի համար բերում է խորենացիական **յոյն բան** բառակապակցությունը:

Յոյն բան = հունարեն:

Ի դեպ, հին հայերեն-իտալերեն բառարանում **յեղուլ ի յոյն բան** կապակցությունը թարգմանվել է **tradurre in Greco**³², որ վկայում է վերևում ասվածի օգտին:

Խորենացու բնագրային համաբարբառում վերոբերյալ կապակցությունը զետեղվել է **յոյն** գլխաբառի օրինակների մեջ³³, այսինքն՝ ըմբռնվել է իբրև ազատ բառակապակցություն, մինչդեռ **հայ բան** կառույցի պարագայում, ինչպես տեսանք, այլ մոտեցում էր կիրառվել:

Խորենացու «Պատմության» մեջ հանդիպում է նաև «**բան**+լեզվանուն» կառույցով կազմված **բան հայերէն** կապակցությունը. «Եւ նորա խնդութեամբ ընկալեալ, և զոր ինչ միանգամ ի միտ առնոյր

31 Տե՛ս «Հայկական համաբարբառ», 7. Մովսիսի Խորենացույ Պատմութիւն Հայոց, բնագրային, գիրք 2-րդ, Եր., Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիա, Հայկական քարտարան, 1976, էջ 182:

32 Տե՛ս Հ. Մանուէլ վրդ. **Ջախջախեան**, Բառգիրք ի բարբառ հայ եւ իտալական, էջ 284:

33 Տե՛ս «Հայկական համաբարբառ», 7. Մովսիսի Խորենացույ Պատմութիւն Հայոց, բնագրային, գիրք 3-րդ, Եր., Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիա, Հայկական քարտարան, 1976, էջ 182:

բան հայերէն յինքն առեալ...» (Խոր., էջ 326): **Բան հայերէն**-ը հայերէն խոսքն է, լայն առումով՝ հայոց լեզուն, պարզապէս հայերենը: Սա պայմանականորեն ենք լեզվանուն համարում: **Բան** բաղադրիչի առկայությամբ համեմատելի է **հայ բան**, **յոյն բան** կառույցների հետ: Ի տարբերություն **հայ բան**-ի՝ Պատմահոր համաբարբառում **բան հայերէն** կապակցությունը չի առանձնացվել, այլ գետնողվել է **հայերէն** գլխաբառի ներքո³⁴, և դա, մեր կարծիքով, ձիշտ մոտեցում է:

է) Ժողովրդանվան հիմքով ածական (-**ական** ածանցով)+**լեզու**:

• «Բայց հրաման տայ բնակչաց աշխարհին՝ ուսանել զխօսս և **զլեզուս հայկական**» (Խոր., էջ 46), «... խոստանայր **հայկականացս լեզուաց** առնել նշանագիր» (Խոր., էջ 325):

Հայկական լեզու = հայերեն:

Ուշագրավ է Խորենացու վերոբերյալ նախադասությունը, որում **հայկական** բառը գործածված է **լեզու** և **խօսք** բառերի հետ: Արևելահայերեն թարգմանվել է հնարամիտ ձևով. «Բայց այդ աշխարհի բնակիչներին հրաման է տալիս սովորել և խոսել **հայերեն**» (Խորենացի, էջ 57):

Հայկական լեզու բառակապակցությունը գործածվել է նաև աշխարհաբարում XIX դարի առաջին կեսին: Հիշենք Աղ. Խուդաբաշյանի երկհատոր բառարանի վերնագիրը՝ «Բառարան ի հայկական լեզուէ ի ռուսաց բարբառ» (Մոսկվա, 1838), Հովհ. Աղայանցի գրքի վերնագիրը՝ «Քերականություն հայկական լեզուի» (Մոսկվա, 1839): Նաև հետագայում՝ գեղարվեստական գրականության մեջ և մամուլում: Այսպէս. «Արամյանը նույն թոպեին խոսում էր յուր ընկերոջ հետ թատերական բեմի վրա, թե **հայկական լեզվով** ներկայացումները կարող էին բավական օգուտ բերել հայ հասարակությանը» (Րաֆֆի), «Բայց եթե այս նոր հիշատակարանիս մեջ **հայկական լեզվի** դեմ սխալներ գտնեք՝ շատ մի մեղադրեք ինձ» (Ռ. Պատկանյան), «Այնտեղ շատ կլսեք **հայկական լեզուն**, երգեր, կտեսնեք շատ հայ երիտասարդներ, նաև օրիորդներ» (Վրթ. Փափագյան)³⁵ և այլն:

34 Տե՛ս «Հայկական համաբարբառ», 7. Մովսիսի Խորենացույ Պատմություն Հայոց, բնագրային, գիրք 2-րդ, էջ 187:

35 Ըստ Արևելահայերենի ազգային կորպուսի (ԱՐԵՎԱԿ) (տե՛ս www.eanc.net):

• «Ապարանս հովանաւորս շինեալ, որ ըստ **պարսկական լեզուին** Դուին կոչի» (Խոր., էջ 265):

Պարսկական լեզու = պարսկերեն:

Քերթողահոր համաբարբառում **հայկական լեզու**-ն ներկայացված է որպես գլխաբառ, այսինքն՝ բաղադրյալ անվանում է ըմբռնվել³⁶, իսկ **պարսկական լեզու**-ն՝ ոչ, թեև նույնարժեք են: **Պարսկական լեզու** կապակցությունն էլ **հայկական լեզու**-ի նման հազվադեպ գործածվել է նաև աշխարհաբարում:

• «... գնային ի կողմանս Յունաց, ուր և ուսեալք և տեղեկացեալք, թարգմանիչս կարգէին ըստ **հելլենական լեզուին**» (Կոր.)³⁷:

Հելլենական լեզու = հունարեն:

Կորյունի համաբարբառում գլխաբառ է դարձել **հելլենական լեզու** բաղադրյալ անվանումը³⁸: **Հելլենական** ածականը Կորյունը գործածել է միայն այս բառակապակցության մեջ, համաբարբառ կազմողն էլ **հելլենական լեզու**-ն իրավացիորեն ընկալել է որպես մեկ միավոր՝ բառակապակցական լեզվանուն: Հետաքրքրական է, որ հետագայում կազմվել է **հելլենարէն** լեզվանունը. «Եւ ի նոցա բարբառն ունիմք բազում բանս ի գիրս սուրբս՝ որք չեն շրջեալ ի հայ լեզուս. այլ ի պատիւ նոցին **հելլենարէն** թողեալ են» (Ներսես Լամբրոնացի)³⁹:

Սպասելի **յունական լեզու** կապակցությունը, սակայն, V դարում չի վկայվել (ըստ մեր ունեցած տվյալների), թեպետ դրա գոյությունը միանգամայն հնարավոր էր: Այդպես նաև **ասորական լեզու** կապակցությունը, որի գործածությունը տեսնում ենք XX դարում: Հմնտ. «Հատկապես ընդգծվում է գրաբարի վրա **ասորական լեզվի** ազդեցությունը»⁴⁰:

36 Տե՛ս «Հայկական համաբարբառ», 7. Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց, բնագրային, գիրք 2-րդ, էջ 187:
 37 **Կորյուն**, Վարք Մաշտոցի, Եր., Երևանի համալսարանի հրատ., 1980, էջ 122 (այսուհետև՝ Կոր., որը և էջը՝ տեքստում):
 38 Տե՛ս «Հայկական համաբարբառ», 2. Կորին «Վարք Մաշտոցի», Եր., Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիա, Հայկական քարտարան, 1972, էջ 142:
 39 **Հովհաննիսյան Լ.**, Գրաբարի բառարան. Նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր, Եր., «Էդիթ Պրինտ», 2010, էջ 168:
 40 **Առաքելյան Վ.**, Ակնարկներ հայոց գրական լեզվի պատմության (V դար), էջ 89:

ը Ժողովրդանվան հիմքով ածական (**-ական** ածանցով)+**բարբառ**:

• «... գի **յասորական բարբառոյն**՝ գնոցին հարցն սրբոց զաւանդութիւնս հայերէն գրեալս դարձուցեն» (Կոր., էջ 122):

• «Իսկ երանելոյն Սահակայ զեկեղեցական գրոց գումարութիւնն կանխաւ ի **յունական բարբառոյն** ի հայերէն դարձուցեալ» (Կոր., էջ 124):

• «Պատճէն թագաւորական օրինադրութեանցն ի **հռովմէական բարբառոյն** թարգմանելոյ ի մերս» (Եվս., էջ 744):

Ասորական բարբառ = **ասորերեն**, **յունական բարբառ** = **հունարեն**, **հռովմէական բարբառ** = **լատիներեն**:

Մաշտոցի կենսագրի համաբարբառում **յունական բարբառ**-ը և **ասորական բարբառ**-ը չեն առանձնացվել որպէս լեզվանուններ (զետեղվել են համապատասխանաբար **յունական** և **ասորական** գլխաբառերի ներքո)⁴¹: Եթէ մատենագիրը **յունական** բաղադրիչով գործածել է նաև **յունական դպրութիւն** կապակցությունը, և կազմողը դրանք միավորել է «մեկ տանիքի տակ», ապա **ասորական բարբառ**-ը **ասորական** բաղադրիչով միակ բառակապակցությունն է: Ակներև է, որ համաբարբառ կազմողը **բարբառ** բաղադրիչով կապակցությունները լեզվանուն չի համարել:

թ Լեզվանուն+**խաւսք** (**խօսք**):

Կառույցի մեկ իրացում է մեզ հայտնի. «Իսկ ի ծայրս **հայերէն խօսից** կողմնակալ, իշխան բիրուց և հազարաց, յարևմտից կուսէ» (Խոր., էջ 105):

Մատենագրի բնագրային համաբարբառում **հայերէն խօսք**-ը առանձնացվել է որպէս գլխաբառ⁴², այսինքն՝ լեզվանուն է ընկալվել:

ժ Ժողովրդանվան հիմքով ածական (**-ական** ածանցով)+**խօսք**:

Հայտնի է, որ «լեզու» և «խոսք» հասկացությունները հարաբերակից են: V դարում **խօսք** նշանակել է «ասութիւն, ասացուածք, գրոյց», նաև «բարբառ կամ լեզու» (ՆՀԲ, հատ. Ա, էջ 998): Երբեմն **լե-**

41 Տե՛ս «Հայկական համաբարբառ», 2. Կորին «Վարք Մաշտոցի», էջ 32, 172:

42 Տե՛ս «Հայկական համաբարբառ», 7. Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց, բնագրային, գիրք 2-րդ, էջ 182:

զու և **խօսք** բառերը գործածվել են (և գործածվում են) մեկը մյուսի փոխարեն:

Լեզվանվանական կառույցը նման է նախորդ, նաև **հայկական լեզու** կառույցներին: Հայտնի է այս կառույցի հինգերորդդարյան հետևյալ գործածությունը. «Եւ յարևելից կողմանէ, զեզերբ **հայկական խօսիցս**, կողմնակալս բիրաւորս զերկուսս ի ցեղից տանց նա-հապետութեանց....» (Խոր., էջ 112-113):

Հայկական խօսք բառակապակցությունը ևս Պատմահոր բնագրային համաբարբառում ըմբռնվել է որպես բաղադրյալ անվանում և զատվել **հայկական** գլխաբառից, ինչպես **հայկական լեզու**-ն⁴³:

Հայկական խօսք-ը արևելահայերեն թարգմանվել է «հայերեն խոսակցություն». «.... թագավորը երկու կողմնակալ է նշանակում հայերեն խոսակցության վերջի սահմաններում» (Խորենացի, էջ 127): Իհարկե, կարող էր հենց **խոսք** բառը գործածվել:

Ժա) Լեզվանվան իմաստն արտահայտվում է շրջասությամբ:

• «.... իբրև զկոյրս մոլորեցան երկիրն **լեզուին թորգոմական աշխարհին**» (Բուզ., էջ 294): **Լեզու թորգոմական աշխարհին** շրջասությունը նշանակում է «հայերեն»:

Մեկ այլ դեպքում լեզվանվան միջոցով շրջասաբար անվանվում է երկիրը: Այսպես. «Իսկ **աշխարհ ամենայն Հայոց լեզուին**, ի գաւառաց գաւառաց, կողմանց կողմանց, տեղեաց տեղեաց Ժողովք միաբանական ժողովրդոցն ի սուգ տխրութեան ընկղմեալ էին» (Բուզ., էջ 334): Հայոց լեզվի երկիրը, բնականաբար, Հայոց աշխարհն է: Հմմտ. մեջբերվածի արևելահայերեն թարգմանությունը. «Իսկ հայերեն խոսող ամբողջ աշխարհը բոլոր գավառներում, կողմերում, տեղերում Ժողովրդի բազմության հետ ընկղմված էին սգի ու տրտմության մեջ»⁴⁴:

Ժբ) Լեզվանուն (կազմված **-երէն** կամ **-արէն** ածանցով)+**լեզու**:

• «.... որոյ յանկարծ գտել նշանագիրս աղփաբետաց **հայերէն լեզուի**» (Կոր., էջ 90), «.... չեն բաւական նշանագիրսն ողջ ածել զսի-ղորբայս զկապս **հայերէն լեզույն**» (Կոր., էջ 94), «.... ծնունդս նորոգ և

43 Տե՛ս նույն տեղում, էջ 187:

44 **Փավստոս Բուզանդ**, Հայոց պատմություն, թարգմանությունը և ծանոթագրությունները՝ Ստ. Մալխասյանցի, Եր., Երևանի համալսարանի հրատ., 1987, էջ 167:

սքանչելի՝ սուրբ աջովն իւրով, նշանագիրս **հայերէն լեզուին**» (Կոր., էջ 96):

Կորյուն վարդապետի «Վարք Մաշտոցի» երկում ուրիշ լեզվա-նունների գործածության օրինակներ ևս կան: Այդ լեզուների համար Մեսրոպ Մաշտոցը գրեր է ստեղծել:

- «Եւ առնոյր կարգաւ նշանագիրս **վրացերէն լեզուին**» (Կոր., էջ 110):

Սա հարևան երկրի լեզվի՝ վրացերենի միակ վկայությունն է V դարի հայ մատենագրության մեջ:

Վրացերէն լեզվանունը զարմանալիորեն վրիպել է Հայկազյան բառարանը կազմողների ուշադրությունից: Այստեղ գրանցվել են ուշ վկայված **վրացական** և **վրացի** բառերը (ՆՀԲ, հատ. Բ, էջ 834), բացակայում է ոսկեդարյան **վրացերէն**-ը: Բառը չկա նաև գրաբարի՝ ՆՀԲ-ին ժամանակակից թարգմանական բառարաններում՝ Հ. Մանուել վրդ. Ջախջախյանի հայ-իտալերեն (Վենետիկ, 1837) և Աղ. Խոնդարաշյանցի հայ-ռուսերեն (Մոսկվա, 1838): Լեզվանունը «վրաց լեզուն» բացատրությամբ կա Առձեռն բառարանում⁴⁵:

- «... քննեալ զբարբարոս զբանս **աղուաներէն լեզուին**, առնէր նշանագիրս ըստ վերապարգեւ կորովի սովորութեան իւրում» (Կոր., էջ 116):

Աղվանների լեզվի **աղուաներէն** անվանումը ևս V դարի հայ մատենագրության մեջ հանդիպում է մեկ անգամ:

Աղուաներէն լեզվանունը ևս տեղ չի գտել Հայկազյան բառարանի, ինչպես և գրաբարի վերոհիշյալ թարգմանական բառարանների բառացանկերում: Առձեռն բառարանում **աղուաներէն**-ը կա «Աղուանից (լեզու)» բացատրությամբ⁴⁶: Աղվաներենն իբերոկովկասյան լեզվաընտանիքի լեզու է, որի այբուբենից բացի՝ գրեթե ոչինչ չի պահպանվել:

Հայկազյան բառարանում չարձանագրված բառերի բառարանում կա **վրացերէն**-ը (Կորյունի օրինակով հանդերձ)⁴⁷, սակայն չի ընդգրկվել **աղուաներէն**-ը: Գրաբարի երկհատոր նոր բառարանում,

45 Տե՛ս «Առձեռն բառարան հայկազնեան լեզուի», Բ տպ., Վենետիկ, Ս. Ղազար, 1865, էջ 768:

46 Տե՛ս նույն տեղում, էջ 19:

47 Տե՛ս **Հովհաննիսյան Լ.**, Գրաբարի բառարան. Նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր, էջ 270:

ընդհակառակը, Կորյունի վկայակոչմամբ արձանագրվել է **աղուաներէն**-ը⁴⁸, չկա, սակայն, **վրացերէն**-ը⁴⁹:

Կորյունի համաբարբառում «-**երէն** ածանցով կազմված բառ+**լեզու**» կառուցվածքով լեզվանունները որպես գլխաբառ ներկայացված են բառակապակցությամբ, այսպես՝ **աղուաներէն լեզու, հայերէն լեզու, վրացերէն լեզու**⁵⁰: Մատենագիրը հետևողականորեն նույն կառույցն է գործածել, և համաբարբառում այդ ձևով ներկայացնելը տրամաբանական է:

«Լեզվանուն (կազմված -**երէն** կամ -**արէն** ածանցով)+**լեզու**» կառուցվածքն ունեցող լեզվանուններ կան նաև Ագաթանգեղոսի և Ղազար Փարպեցու երկերում: Այսպես. «... առաքեաց զնոսա ... ի քաղաքն Կեսարացոց, զոր ըստ **հայերէն լեզուին** Մաժաք կոչեն» (Ագաթ., էջ 1684), «... մանաւանդ թէ գոն նշանագիրք **հայերէն լեզուոյս**» (Փարպ., էջ 2212), «... **զլեզու հայերէն** խաւսից քաջ տեղեկաբար գիտէր» (Փարպ., էջ 2290): Ինչպես տեսնում ենք, լեզվանունը հանդես է գալիս երկու դիրքով, ընդ որում՝ նույն հեղինակի խոսքում:

Ղազար Փարպեցու համաբարբառում գլխաբառ է դարձել բառույթով արտահայտված **հայերէն** լեզվանունը⁵¹, թեև, ինչպես տեսանք, պատմիչը գործածել է նաև **հայերէն լեզու** բաղադրյալ անվանումը: Մեր կարծիքով՝ սա ընդունելի մոտեցում է:

• «Գայր հասանէր ... ի գիւղն զոր Բագայառիձն կոչեն ըստ **պարթեւարէն լեզուին**» (Ագաթ., էջ 1682), «... գայր հասանէր ի քաղաքագեաւոն Բագաւան, որ անուանեալ կոչի ի **պարթեւարէն լեզուէն**՝ Դիցաւան» (Ագաթ., էջ 1694):

48 Տե՛ս **Ղազարյան Ռ.**, Գրաբարի բառարան, հատ. 1, Եր., Երևանի համալսարանի հրատ., 2000, էջ 32:

49 Ի դեպ, թերևս Հայկազյան բառարանում ընդգրկված չլինելու պատճառով -**երէն** և -**արէն** ածանցներով կազմված բառերի շարքում **վրացերէն**-ը չի հիշատակվում նաև V դարի բառակազմությանը նվիրված աշխատության մեջ (տե՛ս **Հովսեփյան Լ.**, Գրաբարի բառակազմությունը, էջ 196):

50 Տե՛ս «Հայկական համաբարբառ», 2. Կորին «Վարք Մաշտոցի», էջ 4, 133, 215:

51 Տե՛ս «Հայկական համաբարբառ», 6. Ղազարայ Փարպեցույ «Պատմութիւն Հայոց», գիրք 2-րդ, Եր., Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիա, Հայկական քարտաբան, 1978, էջ 264-265:

Ազաթանգեղոսի «Պատմութիւն Հայոց» երկուն հանդիպող **պարթևարէն լեզու** լեզվանունն ուշագրավ է նրանով, որ միջինի-րանական լեզուներից մեկի գոյության եզակի վկայությունն է⁵²:

Պարթևների լեզուն պատկանել է իրանյան լեզվախմբի արև-մտյան ենթախմբերից մեկին, Պարթևստանի (Պարթևք)՝ Կասպից ծովից հարավ-արևելք տարածված պետության լեզուն էր: Մ. թ. ա. I հազարամյակից եղել է Իրանական բարձրավանդակում կազմավորված պետությունների պետական և վարչական լեզուն, գործածությունից դուրս է մղվել V-VI դարերում⁵³: Հին հայերենի իրանական փոխառությունները կատարվել են հատկապես միջին պարսկերենից և պարթևերենից⁵⁴:

Հայկազյան բառարանում **պարթևարէն**-ը բացատրվում է այսպես՝ «ի լեզու պարթևաց» և «պարթևական (լեզու)» (ՆՀԲ, հատ. Բ, էջ 635): Ստ. Մալխասյանցի բառարանում **պարթևարէն** գլխաբառի դիմաց գրված է «տե՛ս **պահլավերէն**», որն էլ բացատրվում է «միջին պարսկերէն լեզու, որ գործ էր անվում Պարսկաստանում Սասանյանների ժամանակ»⁵⁵, բայց այս բացատրությունն այժմ ճիշտ չի համարվում:

Ազաթանգեղոսի երկի համաբարբառում գլխաբառ է դարձել **պարթևարէն** լեզվանունը⁵⁶, որը մատենագիրը երկու դեպքում էլ գործածել է **լեզու** բառի հարադրությամբ՝ **պարթևարէն լեզու**: Այս մոտեցումը տարբերվում է Կորյունի համաբարբառում կիրառվածից.

52 Տե՛ս **Հովհաննիսյան Լ.**, Բառերի մեկնությունները հինգերորդ դարի հայ մատենագրության մեջ, Եր., «Գիտություն», 2016, էջ 24-25:

53 Հմմտ. «Հայկական սովետական հանրագիտարան», հատ. 9, Եր., Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիա, Հայկական սովետական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, 1985, էջ 200:

54 Իրանագիտությունը հիմնականում բացահայտել է այս լեզուների առանձնահատկությունները, և դա հնարավորություն է տալիս հայերենի իրանական փոխառությունների մեջ տարբերակելու պարթևական զուգահեռները (տե՛ս **Ջահուկյան Գ.**, Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, էջ 507-556):

55 **Մալխասեանց Ստ.**, Հայերէն բացատրական բառարան, հատ. 4, Եր., Հայկական ՍՍՌ պետական հրատ., 1945, էջ 40: Նույն մոտեցումն է «Լեզվաբանական բառարանում» (տե՛ս էջ 260): «Հզվդ.» նշումով և «պահլավերեն» պարզաբանմամբ **պարթևերեն**-ը գրանցվել է ուղղագրական ընդարձակ բառարանում (տե՛ս **Բարսեղյան Հ.**, Հայերեն ուղղագրական-ուղղախոսական, տերմինաբանական բառարան, Եր., «Լույս», 1973, էջ 775): Գրաբարի ձևաբանորեն տարարժեք բառերի բառարանում լեզվանունը տրվել է մակբայի և ածականի արժեքներով, «պահլավերեն, պահլավական լեզվով» իմաստներով (տե՛ս **Խաչատրյան Լ.**, Գրաբարի բացատրական բառարան (ձևաբանորեն տարարժեք բառեր), Եր., «Զանգակ-97», 2003, էջ 309):

56 Տե՛ս «Հայկական համաբարբառ», IV/II. Ազաթանգեղոս, Պատմութիւն Հայոց, էջ 400:

ինչպես տեսանք, այնտեղ գլխաբառ են դարձել **լեզու** բաղադրիչով կապակցությունները՝ **աղուաներէն լեզու, հայերէն լեզու, վրացերէն լեզու**:

–**երեն** ածանցով կազմված մեծաթիվ լեզվանունների ազդեցությամբ, համաբանության օրենքով ժամանակակից հայերենում լեզվանունը գործածվում է –**երեն** ածանցով՝ **պարթևերեն: Պարթևերեն** ձևն է գործածված Ագաթանգեղոսի երկի արևելահայերեն թարգմանության մեջ (տե՛ս Ագաթանգեղոս, էջ 445, 457): Սակայն բառը ո՛չ –**արեն**, ո՛չ էլ –**երեն** ածանցով չկա Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի և Է. Աղայանի կազմած բացատրական բառարաններում:

Բ) Բառային լեզվանուններ

Լեզվանուններն արտահայտվում են նաև բառույթներով, որոնք կազմվում են «լեզու» բառակազմական իմաստն ունեցող –**արէն** և –**երէն** ածանցներով: Այդ ածանցները հավասարաթեք են, սակայն հետագայում գրեթե ընդհանրական դարձավ –**երէն** ածանցը⁵⁷:

Ինչպես տեսանք, ածանցավոր լեզվանունները կարող են գործածվել ինչպես **լեզու** բառի հարադրությամբ, այնպես էլ առանձնաբար: Այդպիսի օրինակները բազմաթիվ են, ուստի կարող ենք ասել, որ գրական լեզվում դրանք կանոնական են եղել: Այսպես. «... ոգւոյ եւ հողմոյ անուն **երբայեցերէն** եւ **յունարէն** եւ **ասորերէն** նոյն է» (Եզն., էջ 74):

ա) Մի շարք լեզվանուններ կազմվել և գրավոր վկայվել են –**արէն** ածանցով:

• **Յունարէն**. «... վարժեալ հայրենի արուեստի, Հռոմայերէն և **Յունարէն** ուսեալ դպրութիւն» (Ագաթ., էջ 1309–1310), «Կարգէր և ի տեղիս տեղիս դպրոցս **յունարէն** և ասորերէն յամենայն գաւառս Հայոց» (Բուզ., էջ 317), «... և հրաման տայր մի՛ ուսանել գղապրութիւն **յունարէն**, այլ զպարսիկ, և մի՛ որ իշխեսցէ յոյն խօսել կամ թարգմանել» (Խոր., էջ 301), «... եւ նոքա, որպէս երանելին Մաշտոց, մերձաւորեալք ի **յունարէն** հեզենայինսն» (Փարպ., էջ 2214):

57 Կարծիք կա, որ որպես այս կամ այն լեզվի անվանում՝ –**երէն** ածանցով կազմությունները (**հրէերէն, հայերէն**) ժողովրդախոսակցական կնիք ունեն (տե՛ս **Յովհաննիսեան Լ.**, Հայ թարգմանական գրականության բառապաշարը (V դար), էջ 87):

Հարկ է նշել, որ **յունարէն**-ը կարող է ըմբռնվել որպէս ածական՝ «հունական» իմաստով (տե՛ս ՆՀԲ, հատ. Բ, էջ 375): Ընմտ. «... ոչ ինչ էին այնպէս տեղեակ գիտնապէս հրահանգի **յունարէն** ուսմանն» (Փարպ., էջ 2214), որն աշխարհաբար թարգմանվել է այսպէս. «... դեռ լրիվ տեղյակ չէին հունարենի ուսման գիտական հրահանգին»⁵⁸:

Լեզվանունը V դարում վկայվել է նաև **յուներէն** ձևով: Միակ օրինակը Ղազար Փարպեցուց սա է. «Եղջիւրն է անդամ անբեղուն ըստ բուսոյ և անհամ ըստ ճաշակոյ, **յուներէն**» (Փարպ., էջ 2373)⁵⁹: Մատենագրի բնագրային համաբարբառում **յունարէն**-ը և **յուներէն**-ը բնականաբար տրված են առանձին գլխաբառերով⁶⁰. համաբարբառի կազմության ընդհանուր սկզբունքներից է տարբերակներն առանձին ներկայացնելը: Այդ մոտեցումը մինչ այդ կիրառվել էր Հայկազյան բառարանում, որում առանձին գլխաբառով ներկայացված **յուներէն**-ից հղում է արվում **յունարէն**-ին (տե՛ս ՆՀԲ, հատ. Բ, էջ 375), որը V դարում տարածված էր (գործածել են Եզնիկ Կողբացին, Ագաթանգեղոսը, Փավստոս Բուզանդը, Մովսես Խորենացին և երկու անգամ՝ Ղազար Փարպեցին) և կանոնական է ցայսօր: Բառարանում, իհարկէ, **յուներէն**-ը կարող էր լինել **յունարէն**-ի բառահոդվածում՝ իբրև մի տարբերակ: Ճիշտ այնպէս, ինչպէս ներկայացված են, օրինակ, **հրէարէն** կամ **հրէերէն** տարբերակները (տե՛ս ՆՀԲ, հատ. Բ, էջ 142):

Հին հայերեն-իտալերեն բառարանի կազմողը հետևել է Հայկազյան բառարանին՝ **յունարէն**-ին հաջորդող **յուներէն**-ի կողքին նշելով՝ «Նոյն է»⁶¹: Գրաբար-ռուսերեն բառարանում ներկայացված է միայն **յունարէն**-ը⁶²: Գրաբարի ժամանակակից երկհատոր բառարանում տարբերակները մեկտեղված են միևնույն բառահոդվածում՝ **յու-**

58 **Ղազար Փարպեցի**, Հայոց պատմություն, Թուրթ Վահան Մամիկոնյանին, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները՝ Բագրատ Ուլուբաբյանի, Եր., Երևանի համալսարանի հրատ., 1989, էջ 97:

59 Ի դեպ, Փարպեցու երկի արևելահայերեն թարգմանության մեջ գեղջվել է **յուներէն** լեզվանունը պարունակող հատվածը, որը գրաբար բնագրում ուղիղ փակագծերում է տրված (տե՛ս էջ 438-439):

60 Տե՛ս «Հայկական համաբարբառ», 6. Ղազարայ Փարպեցույ «Պատմություն Հայոց», գիրք 2-րդ, էջ 511:

61 **Հ. Մանուէլ վրդ. Ջախջախեան**, Բառգիրք ի բարբառ հայ եւ իտալական, էջ 1047:

62 Տե՛ս **Խուդաբաշյան Ա.**, Հայ-ռուսերեն բառարան, հատ. 2, Եր., Երևանի համալսարանի հրատ., 1987, էջ 210:

նարէն/յուներէն⁶³, որը, սակայն, հավասարաբեւոյնի տպավորութիւն կարող է ստեղծել:

Հարկ է նաև նշել, որ V դարի մատենագիրների երկերի ձեռագրերում հանդիպում են **յունարէն** լեզվանվան տարատեսակ գրություններ, ինչպես՝ **յունաերէն**, **յունայերէն** (տե՛ս Ագաթ., էջ 1310), որոնք պարզապես սխալագրություններ են:

• **Հրէարէն/հրէերէն**. «... եւ մի՛ խօսիր **Հրէարէն** յականջս ժողովրդեանդ, որ կան ի պարսպիդ» (Դ Թագ. ԺԸ. 26), «... եւ աղաղակեաց մեծաձայն **Հրէարէն**» (Դ Թագ. ԺԸ. 28):

Հրեաների լեզվի անվանումը V դարում գործածվել է նաև **-երէն** ածանցով՝ **հրէերէն**, այսինքն՝ ունենք ածանցով տարբերակվող լեզվանուններ⁶⁴: Օրինակ՝ «Մի՛ խօսիր ընդ մեզ **Հրէերէն**» (Եսայ. ԼԶ. 11)⁶⁵:

Հայկազյան բառարանում մինևույն բառահոդվածի գլխաբառ են դարձել լեզվանվան տարբերակները՝ **հրէարէն** կամ **հրէերէն**, և աստվածաշնչյան վերոհիշյալ մեջբերումն արձանագրվել է այսպես՝ «Ոչ գիտէին խօսել **հրէերէն** (կամ **հրէարէն**)» (ՆԼԲ, հատ. Բ, էջ 142): Սուրբ Գրքի գրաբար վերջին հրատարակության մեջ կարդում ենք. «... եւ ոչ գիտէին խօսել **Հրէարէն**» (Նեեմի 13.24):

• **Լիկայոնարէն**. «Եւ ժողովրդոցն տեսեալ զոր արարն Պաւղոս՝ բարձին զձայնս իւրեանց **Լիկայոնարէն**» (Գործք առաքելոց, 14.10):

Լիկայոնարենը փոքրասիական Լիկայոնիա երկրի բնակիչների՝ լիկայոնացիների լեզուն էր, որից շատ քիչ բան է հայտնի⁶⁶:

V դարի հայ ինքնուրույն և թարգմանական գրականության մեջ գործածվել է ընդամենը մեկ անգամ, ինչը հիմք է տալիս եզրակաց-

63 Տե՛ս **Ղազարյան Ռ.**, Գրաբարի բառարան, հատ. 2, Եր., Երևանի համալսարանի հրատ., 2000, էջ 251:

64 Այս լեզվանվան և դրան առնչվող հարցերի մասին հանգամանորեն տե՛ս **Գյուրջիյան Դ.**, Հրեաների լեզվի հայերեն անունները և դրանց տարբերակները, «Հայագիտական հանդես», Եր., 2021, N 4, էջ 3-17, Հրեաների լեզվի հայերեն անունների և դրանց տարբերակների բառարանային մշակման պատմությունը, «Բանբեր հայագիտության», Եր., 2021, N 3, էջ 216-231:

65 Տե՛ս «Համաբարբառ Հին եւ Նոր Կտակարանաց», աշխատասիրություն Թադէոս վրդ. Աստուածատուրեան Արապկերցի, Երուսաղէմ, տպ. Սրբոց Յակովբեանց, 1895, էջ 915:

66 «Ընդհանրապէս կը կարծուի թէ էր Յունարէնի ճիւղերէն մին, Ասորերէն բառերու խառնուրդով արուած» («Բառարան Սուրբ Գրոց, հանդերձ պատկերօք, աշխարհացուցօք եւ տալտակօք», էջ 239):

նելու, որ հայերն առնչություններ չեն ունեցել լիկայոնացիների հետ. դրա հետևանքով էլ նրանց լեզվի անվանումը երբևէ գործածելու առիթ չի եղել: Միակ դեպքը թարգմանության բնագրի թելադրանքով է եղել:

Սուրբգրային **լիկայոնարէն** լեզվանունը չի արձանագրվել գրաբարի (նաև աշխարհաբարի) միալեզվյան և թարգմանական բառարաններում⁶⁷:

Լեզվանվան գործածությունը սահմանափակված է Սուրբ Գրքով: Սակայն պիտի նկատենք, որ լեզվանվան՝ **-արէն** ածանցով կազմված գրաբարյան **լիկայոնարէն** ձևն աշխարհաբարում քիչ է գործածվում: XIX դարի առաջին կեսին այն տեսնում ենք Աստվածաշնչի արևմտահայերեն թարգմանության մեջ. «... ձայներնին վերցնելով՝ **Լիկայոնարէն** ըսին...», սակայն նույն շրջանում արված արևելահայերեն թարգմանության մեջ **-երէն** ածանցով **լիկայոներէն** տարբերակն է գործածվել⁶⁸: Հետագայում Նոր Կտակարանի տարբեր հրատարակություններում հանդիպում է հենց **-երէն** ածանցով տարբերակը թե՛ արևելահայերենում, ինչպես՝ «Եւ ժողովրդի բազմութիւնը ... **լիկայոներէն** ասաց», «... սկսեցին **լիկայոներեն** բարձրաձայն աղաղակել»⁶⁹, և թե՛ արևմտահայերենում (բոլոր լեզվանունների պես մեծատառով և կամ **լեզու** բառի հարադրությամբ), ինչպես՝ «... ժողովուրդը աղաղակեց **Լիկայոներէն**», «... սկսան բարձրաձայն աղաղակել **Լիկայոներէն** լեզուով»⁷⁰:

• «Գրեալ է ի վերայ **հռոմէարեն**», «Որպէս և էր պատձէնն **հռոմէարէն**» (Եվսեբիոս Կեսարացի. ՆՀԲ, հատ. Բ, էջ 127):

67 Թերևս օտարալեզու մասնագիտական բառարանների ազդեցությամբ «Լեզվաբանական բառարանում» սխալագրությամբ հայտնվել է **լիկաոներեն** (ликаонский язык, Lycaonian/lycaonien) հայերեն լեզվանունը՝ «Փոքր Ասիայի բնիկ ժողովուրդներից մեկի՝ լիկաոնցիների լեզուն, որի մասին տվյալներ չկան» բացատրությամբ («Լեզվաբանական բառարան», էջ 134):

68 Տե՛ս Աստուածաշունչ Գիրք Հին եւ Նոր Կտակարաններու, երբայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած, Պէյրոյթ, Աստուածաշունչի միացեալ ընկերութիւններ, 1981, Աստուածաշունչ Մատենա Հին եւ Նոր Կտակարանների, երբայական եւ յունական բնագիրներից թարգմանուած, Շտուտգարտ, Սուրբ Գրոց ընկերութիւններ, 1989:

69 Նոր Կտակարան, արևելահայերէն նոր թարգմանութիւն, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1975, Աստվածաշունչ. Նոր Կտակարան Հիսուսի Քրիստոսի, աշխարհաբար նոր թարգմանություն, Եր., 2001:

70 Նոր Կտակարան, արևմտահայերէն նոր թարգմանութիւն, Երուսաղէմ, Աստուածաշունչի միացեալ ընկերութիւն, 1981, Նոր Կտակարան, Պէյրոյթ, Հայ Կաթողիկէ պատրիարքարանի արտոնութեամբ, 1982:

Հոռմէարէն = լատիներէն:

Առանց վ բաղադրիչի վերոբերյալ օրինակները տրված են Հայկազյան բառարանում՝ **հոռվմէարէն** գլխաբառի ներքո: **Հոռմէարէն/հոռվմէարէն**-ից բացի՝ կան նաև **-երէն** ածանցով տարբերակները՝ **հոռվմերէն/հոռվմայերէն**: Հայկազյան բառարանում **հոռվմայերէն**-ը գրանցվել է ածականի և մակբայի արժեքներով, «ի լեզու կամ ի գիր լատինացոց» և «լատինական» բացատրությամբ՝ հղելով **դաղմատերէն**-ին, որը կրկին «լատիներէն» է նշանակում: Այս բառարանում առհասարակ գլխաբառ են դարձել նույնահիմք ավելի հին՝ **վ**-ով տարբերակները՝ **հոռվմայերէն, հոռվմերէն, հոռվմէարէն**, այլև **հոռվմակողմ, հոռվմայեցի, հոռվմայութիւն**: Կամ էլ տարբերակային երեք գլխաբառերից առաջինը **վ**-ով տարբերակն է՝ **հոռվմայական, հոռմայական** և **հոռմական**: Ի դեպ, **հոռոմարէն, հոռոմերէն** բառահոդվածում հղում է արվում **հոռվմայեցերէն** բառին, սակայն այդպիսի գլխաբառ բառարանում չկա:

Հավելենք, որ Ագաթանգեղոսի երկում գործածվել են մի կողմից **վ** տարրով ձևերը՝ **Հոռվմ, հոռվմայեցիք, Հոռվմայեցոց աշխարհ**, մյուս կողմից՝ առանց **վ**-ի՝ **հոռմայերէն** և **հոռմայեցիք**: Այսինքն՝ այդ կարգի տարբերակայնությունը բնորոշ էր V դարի հայերենին:

Հոռոմ բառը ծագել է **Հոռոմ** տեղանունից և լեզվանվան բառակազմական հիմք դարձել՝ **հոռոմարէն, հոռոմէարէն**: Կան նաև **-երէն** ածանցով տարբերակներ՝ **հոռոմերէն, հոռոմայերէն**: **Հոռոմ** և **հոռոմ** բառակազմական հիմքերով կազմված լեզվանունները V դարում տարբերակներ էին⁷¹:

• «Եցոյց զխորհուրդս թագաւորին **հոռոմարէն**» (ՆՀԲ, հատ. Բ, էջ 120)⁷², «... եղ զպատճէն այսր հրովարտակի, և գրեաց ի լեզու **հոռոմէարէն**» (Եվս., էջ 254):

Հոռոմարէն, հոռոմէարէն = լատիներէն:

71 Լեզվաբանական մի գրքում շարքով նշվում են **հոռոմերէն/հոռոմայերէն/հոռովմայերէն/հոռվմերէն** տարբերակները, սակայն **հոռոմարէն**-ը դրանցից գատ է ներկայացված, որն արդարացված չէ (տե՛ս **Հովսեփյան Լ.**, Գրաբարի բառակազմությունը, էջ 196):

72 Եվսեփոս Կեսարացուց են Հայկազյան բառարանում բերված օրինակները՝ «Ըստ **հոռոմերէն** լեզուի», «Ասէ ի **հոռոմերէն** ցամենայն ժողովուրդսն»:

Գործածվել է **լեզու** բաղադրիչի հետ և առանց դրա: **Հոռոմա-րեն/հոռոմէարեն** լեզվանունը հետագայում ձեռք է բերել նաև «բյուզանդական հունարեն» իմաստը:

• «**Քաղղէարեն**՝ սառա, և հայերէն՝ իշխանակին», «Որ **քաղղէարեն** Իսահակ անուանի» (Փիլոն), «Որ **քաղղէացերէն** թաղաթտայ անուանի» (Եվսեբիոս. ՆՇԲ, հատ. Բ, էջ 971):

Քաղղէարեն (կամ **քաղղէերէն, քաղղէացերէն**) լեզվանունը V դարի հայ ինքնուրույն մատենագրության մեջ չի հանդիպում (եկնելով մատենագիրների բնագրերից և բնագրային համաբարբառներից, ինչպես նաև Հայ մատենագրության թվանշային գրադարանի տվյալներից⁷³):

Քաղղէացերէն լեզվանունը կազմությամբ համեմատելի է **վրացերէն**-ի և **եբրայեցերէն**-ի հետ: Բառի կազմում **-աց(ի)** և **-եց(ի)** մասնիկներ ունեն նաև հետագայում՝ XVIII-XX դարերում կազմված մի շարք լեզվանուններ՝ **հոռոմայեցերէն, եթովպացերէն, եգիպտացերէն** և այլն⁷⁴:

Ինչպես տեսանք, կան այս լեզվանվան բառակապակցական համարժեքները. Մովսես Խորենացու երկում գործածված է **Քաղղեացոց բարբառ** կապակցությունը, իսկ Սուրբ Գրքի հայերեն թարգմանության մեջ՝ **Քաղղեացոց լեզու**-ն:

բ) Մի շարք լեզվանուններ **-երէն** ածանցով են կազմվել:

Հայերէն. «... զի յասորական բարբառոյն՝ զնոցին հարցն սրբոց զաւանդութիւնս **հայերէն** գրեալս դարձուցեն» (Կոր., էջ 122) և «... զեկեղեցական գրոց գումարութիւնն կանխաւ ի յունական բարբառոյն ի **հայերէն** դարձուցեալ» (Կոր., էջ 124), «... նա թէ և **հայերէն** որ մանր միտ դնիցէ՝ նոյնպէս գտանի» (Եզն., էջ 74), «... եստեղծ զնշանագիրս մեր, հանդերձ Հռոփանոսի կերպածնեալ զգիրն առ ձեռն Մեսրոպայ, փոխատրելով **զհայերէն** աթոթայսն ըստ անսայթաքութեան սիւղաբայից Հելլենացոց» (Խոր., էջ 327):

Ամենաշատը հանդիպում է Ղազար Փարպեցու «Պատմութիւն Հայոց» երկում: Այսպես. «... Կոստանդնուպոլիս անուանէր, որ թարգ-

73 Տե՛ս <https://digilib.aua.am/> (մուտք՝ 10.03.2023):

74 Տե՛ս **Գյուրջիյան Գ.**, Հրեաների լեզվի հայերեն անունները և դրանց տարբերակները, էջ 5-6:

մանի **հայերէն**՝ Կոստանդիանոսի քաղաք», «... կարդացեալ տեղա- կասցի զվարս կենաց նորա եւ զիւր **հայերէն** նշանագրացն», «... տե- սի նշանագիրս **հայերէն** առ ումենն եպիսկոպոսի», «... մերձաւոր էր առն բարեպաշտի Դանիէլի եպիսկոպոսի, առ որում նշանագիրքն **հայերէն** կային», «... քանզի ամենայն անձն յորդորեալ փափագէր յուսումն **հայերէն** գիտութեան», «... քանզի ոչ գոյին դեռ եւս **հայե- րէն** լսողութեամբ սուրբ կտակարանք եկեղեցոյ», «... զգիր գրենոյն **հայերէնի** և հելլենացին ուղղեալ յօրինուածս՝ ցանկային կարգել դպրոցս», «... հանդիպեցուցանէր **գհայերէն** աթուփայսն ըստ կարգ- ման սիլովբայիցն» (Փարպ., էջ 2203, 2212, 2213, 2214):

Ասորերէն. «Խօսեաց ընդ ծառայս քո **Ասորերէն**» (Դ Թագ. ԺԸ. 26), «Խօսեաց ընդ ծառայս քո **Ասորերէն**, զի լսեմք» (Ես. ԼԶ. 11):

Հռոմայերէն. «... վարժեալ հայրենի արուեստիւ, **Հռոմայերէն** և Յունարէն ուսեալ դպրութիւն» (Ագաթ., էջ 1309-1310): Լեզվանվան հիմքում **Հռովմ/Հռոմ** տեղանունն է. Հռոմի լեզուն լատիներենն էր, ուստի լեզվանունը նշանակում է «լատիներեն»: Ագաթանգեղոսի եր- կի արևելահայերեն թարգմանության մեջ գործածվել է **լատիներեն** լեզվանունը, սակայն բնագրին հարազատ մնալու և դարաշրջանի իրակություններն անաղարտ արտահայտելու նպատակով փակա- գծերում տրվել է նաև բնագրային **հռոմայերեն**-ը (Ագաթանգեղոս, էջ 17):

Ագաթանգեղոսի նախադասությունը՝ **հռոմարէն** տարբերա- կով, Հայկազյան բառարանում գետեղված է **հռոմարէն, հռոմերէն** բառահոդվածում (տե՛ս ՆՀԲ, հատ. Բ, էջ 120):

Պարսկերէն. «Հեզաբար կարդաց յանուանէ զեպիսկոպոսն, քանզի քաջ իսկ գիտէր **պարսկերէն**» (Եղ.)⁷⁵, «Հրաման տային երա- նելոյն Սահակայ եպիսկոպոսին՝ թարգմանել...., քանզի սուրբն եպիս- կոպոսն միայն գիտէր **պարսկերէն**, եւ այլ ոք ի սրբոցն ոչ գիտէր» (Փարպ., էջ 2293):

Հանդիպում է նաև **լեզու** բառի հարադրությամբ. «Անարգանս եւս դներ թշնամանաց, ասելով ի **պարսկերէն լեզու**՝ թէ...» (Բուզ., էջ 346): Բուզանդի երկի բնագրային համաբարբառում հաջորդաբար

75 **Եղիշէ**, Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Եր., Երևանի համալսարանի հրատ., 1989, էջ 298:

գլխաբառ են դարձել **պարսկերէն** և **պարսկերէն լեզու** միավորները⁷⁶, որը, անշուշտ, ճիշտ լուծում չէ:

Եբրայեցերէն. «... քանզի ոգւոյ և հողմոյ անուն **եբրայեցերէն** և յունարէն և ասորերէն նոյն է» (Եզն., էջ 74)⁷⁷:

Ինչպէս որ կա **եբրայեցոց լեզու**-ի բառակապակցական **հեբրայեցոց լեզու** տարբերակը, այնպէս էլ հազվադեպ պատահում է բառույթով արտահայտված **հեբրայեցերէն** տարբերակը: Այսպէս. «Գրեաց զնա Հրէից հաւատացելոցն **հեբրայեցերէն** գրով» (Եվս., էջ 472):

Դաղմատերէն. «Եւ էր գիր գրեալ ի վերայ նորա Յունարէն և **Դաղմատերէն** եւ Եբրայեցերէն գրով թէ Սա է արքայն Հրէից» (Ղուկ. 23.38). երեք լեզվանուն՝ միևնույն նախադասության մեջ: Լեզվանունները Հովհաննու Ավետարանում հակառակ հերթականությամբ են. «... եւ էր գրեալ Եբրայեցերէն, **Դաղմատերէն** եւ Յունարէն» (Հովհ. 19.20):

Դաղմատերէն-ը Հայկազյան բառարանը բացատրում է իբրև «լատիներէն, հռովմայերէն», **դաղմատ**-ը կամ **դաղմատացի**-ն՝ «բնակիչ Դաղմատիոյ»՝ պարզաբանելով, որ «Դաղմատիա է կողմն Եւրոպիոյ մերձաւոր Ասիոյ, վասն որոյ ի մեզ Եւրոպացիք կամ լատինք ի նոյն անուն կոչին» (ՆՀԲ, հատ. Ա, էջ 592):

Մակբայի արժեքով արձանագրված է Ս. Գաբամաձյանի և Ստ. Մալխասյանցի բառարաններում («լատիներէն, հռովմայեցոց լեզուով՝ գրով» և «դաղմատացոց լեզուով. լատիներէն»)⁷⁸: Բառը կա արևմտահայերենի երկհատոր բացատրական բառարաններում: Հալեալ-

76 Տե՛ս «Հայկական համաբարբառ», 5-Գ. Փաստոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց, Եր., Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիա, Հայկական քարտարան, 1978, էջ 341:

77 Բնագրային է **եբրեացերէն**-ը (Եզն., էջ 267): «Մատենագիրք Հայոց»-ում **եբրեացերէն**-ը բնագրում է, առանց ծանոթագրության (տե՛ս հատ. Ա, էջ 456): Մատենագրի բնագրային համաբարբառում, որ կազմվել է «Եղծ աղանդոց»-ի 1826 թ. վենետիկյան հրատարակության հիման վրա, գլխաբառ են դարձել կանոնական **եբրայեցերէն** և **եբրայեցի** բառերը (**եբրայեցոց լեզու** կապակցությունը **եբրայեցի** բառահոդվածում է) (տե՛ս «Հայկական համաբարբառ», 1. Եզնկայ Կողբացոյ Բագրեանդայ եպիսկոպոսի «Եղծ աղանդոց», Եր., Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիա, Հայկական քարտարան, 1972, էջ 203):

78 **Գաբամաձեան Ս.**, Նոր բառագիրք հայերէն լեզուի, Կ. Պոլիս, տպ. Ռ. Սագաեան, 1910, էջ 353, **Մալխասեանց Ստ.**, Հայերէն բացատրական բառարան, հատ. 1, Եր., Հայկական ՍՍՌ պետական հրատ., 1944, էջ 484:

յան բառարանում տրված է գոյականի, իսկ բեյրության բառարանում՝ գոյականի և մակբայի արժեքներով՝ «դաղմատերէն լեզու», «հռոմէացիներու լեզու, լատիներէն», «դաղմատերէն՝ լատիներէն լեզուով»։ հիշատակվում է Հիսուսի խաչելության դրվագը⁷⁹։

Պարզենք, թե Սուրբ Գրքի (կամ Նոր Կտակարանի) նոր հրատարակություններում ո՞ր բառն է գրաբարի **դաղմատերէն**-ի համարժեքը։

XIX դարի առաջին կեսին հունական բնագրից բողոքականների արած արևելահայերեն թարգմանության մեջ մի դեպքում գործածվել է **հռովմայեցերէն**-ը, մյուս դեպքում՝ **լատիներէն**-ը, իսկ դրա արդիականացված թարգմանության մեջ (2018 թ.) միայն **լատիներէն**-ն է։ Նույն շրջանի արևմտահայերեն թարգմանության մեջ երկու Ավետարաններում էլ գործածվել է **լատիներէն**-ը, նույնը՝ 2001 թ. հիմնովին վերամշակված տարբերակում։ XX դարի վերջին քառորդից սկսած՝ Նոր Կտակարանի (կամ Ավետարանների)՝ գրաբարից արված արևելահայերեն և արևմտահայերեն նոր թարգմանություններում համատարած գործածվել է միայն **լատիներէն**-ը։

Փաստորեն, Ավետարանների աշխարհաբար թարգմանություններում գոնե մեկ անգամ չի գործածվել գրաբարյան լեզվանունը, որն այլուր ևս չի գործածվում. գործածության ոչ մի նմուշ չկա Արևելահայերենի ազգային կորպուսում, որն ամփոփում է բառագործածության 110 միլիոն դեպք։ Ահա թե ինչու է **դաղմատերէն** լեզվանունը բացակայում ակադեմիական և է. Աղայանի բացատրական բառարաններից։

Վերոբերյալ փաստերը ցույց են տալիս, որ ընդունելի չէ այն պնդումը, թե Աստվածաշնչում գործածված բառույթային լեզվանունների մեջ «ոչ մի հնացած բառ չկա»⁸⁰։ **Դաղմատերէն**-ը հնացած է, գործածությունից ամբողջովին դուրս մղված։

Բառով արտահայտված լեզվանուններից մի քանիսը (**հայերէն, ասորերէն, յունարէն**) վստահաբար նախագրային շրջանի կազմու-

79 Տե՛ս **Պետրոս վրդ. Ճիզմէճեան**, Հայերէն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, հատ. 2, Հալէպ, տպ. «Անի», 1957, էջ 123 և **Ճէրէճեան Գնել արք.**, **Տօնիկեան Փ.**, Հայոց լեզուի նոր բառարան, հատ. 1, Պէյրուք, «Կ. Տօնիկեան եւ որդիք», 1992, էջ 439։

80 **Առաքելյան Վ.**, Հինգերորդ դարի հայ թարգմանական գրականության լեզուն և ոճը, էջ 91։

թյուններ են⁸¹: Մի քանի լեզվանուններ գրավոր մշակույթի արգասիք են, ինչպես՝ Աստվածաշնչում գործածվածներից **դաղմատերէն**-ը և **լիկայոնարէն**-ը, թարգմանական այլ գործերից՝ **քաղղէարէն**-ը, **հռմէարէն**-ը և **հրէարէն**-ը: Նկատի ունենանք, որ թվարկված լեզվանունները նշված ձևերով հայ ինքնուրույն մատենագրության մեջ չեն հանդիպում:

2. V դարում վկայված լեզուների ցանկը

Արդեն կարող ենք հստակ ասել, թե արդի աշխարհի կենդանի և մեռած ո՛ր լեզուների անվանումներն են հանդիպում V դարի հայ ինքնուրույն և թարգմանական գրականության մեջ:

Բացատրելի են այս կամ այն լեզվանվան գործածությունը, դրա հաճախականությունը: Օրինակ՝ վերցնենք **յունարէն**-ը և դրա բազմազան տարբերակները: Հայտնի է, որ հայերի և հույների մշակութային, քաղաքական և այլ կարգի շփումները վաղնջական պատմություն ունեն: Հայոց Տիգրան Բ արքայի արքունիքում կային հույն փիլիսոփաներ, գիտնականներ, ճարտասաններ և գրողներ: Արտաշիայան հարստության մյուս թագավորների, ինչպես նաև Արշակունիների տիրապետության շրջանում չի դադարում հաղորդակցումը հունական մշակույթի հետ: Հայերի շփումը հելլենիստական մշակույթին փոխարինող և դրա փոխակերպումն ու զարգացումը ներկայացնող բյուզանդական մշակույթի հետ ավելի է ուժեղանում երկու երկրներում քրիստոնեության՝ պաշտոնական կրոն դառնալուց հետո: Հայերի մեջ քերականական գիտելիքները թափանցում էին ոչ միայն ուղղակի փոխանցմամբ, այլև Հայաստանում գործող հունական և ասորական դպրոցներում առաջացող լեզվական ականա համեմատությունների միջոցով⁸²: Ուստի բնական և օրինաչափ է V դարի հայերեն մատյաններում հույների լեզվի անվան լայն գործածությունը:

V դարից մեզ ավանդված լեզվանունների միջոցով կարող ենք կազմել «աշխարհի լեզվական քարտեզը», որ հայտնի էր տվյալ դարի (և նախորդ շրջանների) հայերին:

81 Տե՛ս **Ջահուկյան Գ.**, Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, էջ 355:

82 Տե՛ս **Ջահուկյան Գ.**, Քերականական և ուղղագրական աշխատությունները Հայաստանում (V-XV դդ.), Եր., Երևանի համալսարանի հրատ., 1955, էջ 31-32:

Լեզվանունների ցանկը կազմել ենք լեզուների այսօրվա անվանումներով, ընդգրկել դրանց՝ բառակապակցությամբ և բառերով արտահայտված հինգերորդ դարյան այն տարբերակները, որոնք մեզ հայտնի են: Լեզվանունները տրված են այբբենական կարգով (արդի ուղղագրությամբ), նույն ձևով՝ նաև յուրաքանչյուր լեզվանվան տարբերակները:

ԱՂՎԱՆԵՐԵՆ – աղուաներէն (լեզու), գարգարացոց լեզու.

ԱՍՈՐԵՐԵՆ – ասորերէն, ասորի լեզու/լեզու ասորի, ասորոց լեզու, ասորական բարբառ.

ԵՐՐԱՅԵՐԵՆ – երբայեցերէն, երբայեցոց լեզու/հերբայեցոց լեզու, հրէարէն/հրէերէն.

ԼԱՏԻՆԵՐԵՆ – դաղմատերէն, հռոմնարէն, հռոմերէն, հռոմնաբարէն, հռոմայերէն, հռոմ լեզու, հռոմ բարբառ, հռովմայեցի բարբառ, հռովմէական բարբառ.

ԼԻԿԱՅՈՆԱՐԵՆ – լիկայոնարէն.

ՀԱՅԵՐԵՆ – հայ բան, հայ բարբառ, հայ լեզու, հայերէն/հայերէն (լեզու)/բան հայերէն, հայկական լեզու, հայկական խօսք, հայոց լեզու.

ՀՈՒՆԱՐԵՆ – հելլէն լեզու, հելլենական լեզու, յոյն բան, յոյն լեզու, յունական բարբառ, յունարէն, յունաց լեզու.

ՊԱՐԹԵՎԵՐԵՆ – պարթեւարէն.

ՊԱՐՍԿԵՐԵՆ – պարսկական լեզու, պարսկերէն/պարսկերէն (լեզու).

ՎՐԱՅԵՐԵՆ – վրացերէն (լեզու).

ՔԱՂԴԵՐԵՆ – լեզու քաղղէացոց, քաղղէացոց բարբառ, քաղղէացերէն.

ՔԱՆԱՆԵՐԵՆ – քանանացոց լեզու:

Այսպիսով՝ V դարի հայերենում գործածվել են 12 լեզուների անվանումներ: Ընդ որում, այդ լեզուներից մի քանիսը (քաղղեերեն, լիկայոնարեն, պարթեւերեն, քանաներեն) V դարում մեռած էին:

Եզրակացություններ

1. V դարի հայերեն գրավոր աղբյուրներում (ինքնուրույն և թարգմանական), մայրենի լեզվի անվանումից բացի, վկայվել են նաև

շրջակա ու հեռավոր այն ժողովուրդների 12 լեզուների անվանումները, որոնց հետ հայերը տարատեսակ առնչություններ են ունեցել: Բացառություն են մեկ-երկուսը, որոնք գործածվել են Աստվածաշնչի թարգմանության մեջ (օրինակ՝ **լիկայոնարէն**):

2. Լեզվանունների կազմը պատկերում է հայերի մշակութային, քաղաքական, կրոնական և այլ հարաբերությունների ու առնչությունների ողջ շրջանակը:

3. V դարի հայերենում վկայված լեզվանուններն անվանում են տարբեր լեզվաընտանիքների պատկանող լեզուներ՝ հնդեվրոպական (**հայերէն, պարսկերէն, պարթևարէն, յունարէն, հռոմայերէն, դաղմատերէն**), սեմական (**ասորերէն, եբրայեցերէն, քաղդէացոց լեզու/բարբառ**), կովկասյան (**վրացերէն, աղուաներէն**):

4. V դարի հայերենում լեզվանունները կազմվել են երկու կերպ՝ բառակապակցությամբ և բառով: Տարատեսակ կառուցվածք ունեցող բառակապակցությունների գերադաս անդամ են դարձել **լեզու, բարբառ, բան** և **խօսք** բառերը.

- անեզական տեղանվան սեռական հոլովածն+**լեզու (հայոց լեզու, յունաց լեզու, ասորոց լեզու)**.

- ժողովրդանվան հոգնակի սեռական հոլովածն+**լեզու (գարգարացոց լեզու, եբրայեցոց լեզու, քաղդէացոց լեզու, քանանացոց լեզու)**.

- ժողովրդանվան հոգնակի սեռական հոլովածն+**բարբառ (հռոմայեցոց բարբառ, քաղդէացոց բարբառ)**.

- ժողովրդանուն (ուղիղ ձևով)+**լեզու (ասորի լեզու, հայ լեզու, հելլէն լեզու, հռոմ լեզու, յոյն լեզու)**.

- լեզվանուն (-**երէն** կամ -**արէն** ածանցով)+**լեզու (աղուաներէն լեզու, հայերէն լեզու, պարթևարէն լեզու, պարսկերէն լեզու, վրացերէն լեզու)**.

- ժողովրդանվան հիմքով ածական (-**ական** ածանցով)+**լեզու (հայկական լեզու, հելլենական լեզու, պարսկական լեզու)**.

- ժողովրդանվան հիմքով ածական+**բարբառ (ասորական բարբառ, հայկական բարբառ, հռովմէական բարբառ, յունական բարբառ)**.

- ժողովրդանուն+**բարբառ (հայ բարբառ, հռոմ բարբառ, յոյն բարբառ)**.

• Ժողովրդանուն+բան (հայ բան, յոյն բան), բան+լեզվանուն (բան հայերէն).

• Ժողովրդանվան հիմքով ածական+խաւսք/խօսք (հայկական խաւսք).

• Լեզվանուն+խաւսք/խօսք (հայերէն խաւսք):

5. Բառային միավորներով արտահայտված մի շարք Լեզվանունների գործածվել են առանձնաբար՝ առանց **Լեզու** բառի հարադրության՝ **հայերէն, ասորերէն, դաղմատերէն, եբրայեցերէն, լիկայոնարէն, հռոմայերէն, հրէարէն (կամ հրէերէն), յունարէն:**

6. Հաճախ նույն Լեզվանվան համար կազմվել և գործածվել են տարբերակային ձևեր՝ արտահայտված բառակապակցություններով և բառույթ(ներ)ով: Տարբերակայնություն է առաջ եկել նաև **-արէն** և **-երէն** ածանցների միջոցով:

7. V դարի հայերեն Լեզվանունները հիմնականում արձանագրվել են հին հայերենի (գրաբարի) բառարաններում:

8. V դարի Լեզվանունների մեծ մասը փոխանցվել է աշխարհաբարին: Մի քանիսի գործածությունը (**լիկայոնարէն, դաղմատերէն**) սահմանափակված է Աստվածաշնչի թարգմանություններով և Լեզվաբանական աշխատություններով:

Դավիթ Ս. Գյուրջիյան – գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է հայոց Լեզվի բառակազմությունը և բառակազմական իմաստաբանությունը, բառարանագրությունը և բառարանագիտությունը, խոսքարվեստը, հայերենի ուսուցման հարցերը: Հեղինակ (և համահեղինակ) է դպրոցական և համալսարանական բազմաթիվ դասագրքերի ու ձեռնարկների, բառարանների, ուսումնական, մեթոդական, գիտահանրամատչելի գրքերի և 80-ից ավելի գիտական հոդվածների:

Էլ. հասցե՝ gyurjidav@mail.ru

THE ARMENIAN LINGUONYMS OF THE FIFTH CENTURY

Davit S. Gyurjinyan

Candidate of Sciences in Philology

Key words – vocabulary of the Armenian language of the 5th century, linguonym, name of the language expressed by a lexeme, name of the language expressed by a phrase, variance of linguonyms, obsolete linguonym, suffix -արէն / -երէն, shifts in vocabulary.

In the Armenian independent and translated written sources of the 5th century, in addition to the name of the native (Armenian) language, the names of 12 other languages of the nations are mentioned, with the speakers of which the Armenians had cultural, political, religious and other relations. The exceptions are single linguonyms used in the translation of the Bible (լիկայոնսարէն "Lycaon language").

The Armenian linguonyms of the 5th century are divided into two groups according to their structure: phrases and lexemes. Different structures of phrases are distinguished: the genitive case of toponym pluralia tantum+լեզու "language" (հայոց լեզու (the Armenian language/ the language of the Armenians), ասորոց լեզու "the Assyrian language/ the language of the Assyrians"), "the genitive case of plural names of the representative of the people+լեզու / բարբառ "language, dialect"" (գարգարացոց լեզու (the language of the Gargars), եբրայեցոց լեզու (the language of the Jews), հռոմայեցոց բարբառ (the language of Romans), քաղդէացոց լեզու / բարբառ (the language of the Chaldeans), "name of the nation (directly)+լեզու / բարբառ "language"" (ասորի լեզու (the Assyrian language), հայ լեզու / բարբառ (the Armenian language), յոյն լեզու / բարբառ (the Greek language), հռոմ լեզու / բարբառ (the language of Latin)), "linguonym (with suffix –երէն or –արէն with derivational meaning "language") with component լեզու "language" (աղուաներէն լեզու (the Agvan language), պարթևարէն լեզու (Parthian), պարսկերէն լեզու (Persian), վրացերէն լեզու (Georgian), "an adjective based on the name of the people (with the suffix -ական)+լեզու / բարբառ "language" (ասորական բարբառ (Assyrian), հայկական լեզու / բարբառ

(Armenian), հելլենական լեզու / յունական բարբառ (Hellenic / Greek), պարսկական լեզու (Persian), հռովմեական բարբառ (Latin)). Many linguonyms are suffix formations, such as հայերէն (the Armenian language), ասորերէն (the Assyrian language), յունարէն (the Greek language), etc. In the linguonyms of the 5th century, a noticeable variance is manifested.

Linguonyms attested in the Armenian language of the 5th century name languages belonging to different language families: Indo-European (հայերէն “Armenian”, պարսկերէն “Persian”, պարթևարէն “Parthian”, յունարէն “Greek”, հռոմայերէն “Latin”), Semitic (ասորերէն “Assyrian”, եբրայեցերէն “Jewish”), Caucasian (վրացերէն “Georgian”, աղուաներէն “Agvanian”).

Резюме

АРМЯНСКИЕ ЛИНГВОНИМЫ V ВЕКА

Давид С. Гюрджинян
Канд. фил. наук

Ключевые слова - лексика армянского языка V в., лингвоним, название языка, выраженное лексемой, название языка, выраженное словосочетанием, вариантность лингвонимов, устаревший лингвоним, постфикс **-արէն [-aren] / -երէն [-eren]**, сдвиги в лексике.

В армянских оригинальных и переводных письменных источниках V в. помимо названия родного (армянского) языка упоминаются названия 12 других языков тех народов, с носителями которых армяне имели культурные, политические, религиозные и другие отношения (исключениями являются единичные лингвонимы, использованные в переводе Библии: լիկայոնարէն «ликаонский язык»).

Армянские лингвонимы V в. по структуре делятся на две группы: словосочетания и лексемы. Выделяются различные структуры словосочетаний: «род. падеж топонима pluralia tantum + լեզու «язык»» (հայոց լեզու (язык Армении/армян), ասորոց լեզու (язык Ассирии/ассирийцев)), «род. падеж мн. ч. названия представителя народа + լեզու/բարբառ «язык»» (գարգարացոց լեզու (язык гаргаров), եբրայեցոց լեզու (язык евреев), հռոմայեցոց բարբառ (язык римлян), քաղդայեցոց լեզու/բարբառ (язык халдейцев), «название народа (в прямом виде) + լեզու/բարբառ «язык»» (ասորի լեզու (ассирийский

язык), հայ լեզու/բարբառ (армянский язык), յուն լեզու/բարբառ (греческий язык), հռոմ լեզու/բարբառ (латинский язык)), «лингвоним (с суффиксом -երէն или -արէն со словообразовательным значением «язык»)+լեզու «язык» (աղուաներէն լեզու (агванский язык), պարթևարէն լեզու (парфянский язык), պարսկերէն լեզու (персидский язык), վրացերէն լեզու (грузинский язык), «прилагательное, основанное на названии народа (с суффиксом -ական) + լեզու/բարբառ «язык»» (սառաքական բարբառ (ассирийский), հայկական լեզու/բարբառ (армянский), հելլենական լեզու/յունական բարբառ (эллинический/греческий), պարսկական լեզու (персидский), հռովմէական բարբառ (латинский)). Многие лингвонимы – суффиксальные образования: հայերէն (армянский язык), սառերէն (ассирийский язык), յունարէն (греческий язык) и т.д. В лингвонимах V в. проявляется заметная вариантность.

Засвидетельствованные в армянском языке V в. лингвонимами называются языки, принаследжащие разным языковым семьям: индоевропейской (հայերէն «армянский», պարսկերէն «персидский», պարթևարէն «парфянский», յունարէն «греческий», հռոմայերէն «латинский»), семитской (սառերէն «ассирийский», երրայեցերէն «еврейский») и кавказской (վրացերէն «грузинский», աղուաներէն «агванский»).

REFERENCES

1. “Ardzeṙn baṙaran haykaznean lezui”, B Էր., Venetik, 1865, 849 էջ (**In Armenian**).
2. “Baṙaran Surb Grots՝, handerdz patkerōk՝, ashkharhats՝uts՝ōk՝ yew takhtakōk՝”, K. Pōlis, Էր. “Y. Poyachean”, 1881, 635 էջ (**In Armenian**).
3. “Hamabarbaṙ Hin yev Nor Ktakaranats՝”, ashkhataşirut՝iwn T՝adēōs vrd. Astuatsaturean **Arapkerts՝i**, Yerusaḡhēm, Էր. Srbots՝ Yakobeants՝, 1895, 1574 էջ (**In Armenian**).
4. “Haykakan hamabarbaṙ”, 1. Yeznkay Koghbatşwoy Bagrewanday yepiskoposi “Yeghtş aḡhandots՝”, kazmets՝: **Zh. B. T՝osunyan**, Yer., Haykakan SSH gitut՝yunneri akademia, Haykakan k՝artaran, 1972, 840 էջ (**In Armenian**).
5. “Haykakan hamabarbaṙ”, 2. Koriwn “Vark՝ Mashtots՝i”, kazmel yev tpaḡrut՝yan ē patrastel **Ē. Demirchyanē**, Yer., Haykakan SSH GA hrats., 1972, 232 էջ (**In Armenian**).
6. “Haykakan hamabarbaṙ”, 5-G. P՝awstosi Buzandats՝woy “Patmut՝iwn Hayots՝”, hamabarbaṙē kazmets՝: **V. M. Gevorgyanē**, Yer., Haykakan SSH gitut՝yunneri akademia, Haykakan k՝artaran, 1978, 724 էջ (**In Armenian**).
7. “Haykakan hamabarbaṙ”, 6. Ghazaray P՝arpets՝woy “Patmut՝iwn Hayots՝”, girk՝ 2, hamabarbaṙē kazmets՝: **Al. S. Margaryan**, Yer., Haykakan SSH gitut՝yunneri akademia, Haykakan k՝artaran, 1978, 515 էջ (**In Armenian**).
8. “Haykakan hamabarbaṙ”, 7. Movşisi Khorenats՝woy “Patmut՝iwn Hayots՝”, bnagraşin, girk՝ 2, hamabarbaṙē kazmets՝in: **Ō. M. Khach՝atryan, A. G. Baghdasaryan**, Yer., Haykakan SSH gitut՝yunneri akademia, Haykakan k՝artaran, 1976, 450 էջ (**In Armenian**).
9. “Haykakan hamabarbaṙ”, 7. Movşisi Khorenats՝woy “Patmut՝iwn Hayots՝”, bnagraşin, girk՝ 3, hamabarbaṙē kazmets՝: **B. A. Yeganyan**, Yer., Haykakan SSH gitut՝yunneri akademia, Haykakan k՝artaran, 1976, 593 էջ (**In Armenian**).

10. “Haykakan hamabarbar”, IV/II. Agat‘angeghos, Patmut‘iwn Hayots‘, bnagrayin hamabarbarə kazmets‘in: **H. V. Sargsyan, B. A. Yeganyan**, Yer., Haykakan SSH gitut‘yunneri akademia, Haykakan k‘artaran, 1973, 624 ēj (**In Armenian**).
11. “Haykakan sovetakan hanragitaran”, hat. 9, Yer., “Haykakan sovetakan hanragitaran” glkhavor khmbagrut‘yun, 1985, 720 ēj (**In Armenian**).
12. “Matenagirk‘ Hayots‘”, hat. A. Ye. dar, Ant‘ilias-Libanan, Metsi Tann Kilikiyoy kat‘oghikosut‘iwn, 2003, 1288 ēj (**In Armenian**).
13. “Matenagirk‘ Hayots‘”, hat. B. Ye. dar, Ant‘ilias-Libanan, Metsi Tann Kilikiyoy kat‘oghikosut‘iwn, 2003, 2601 ēj (**In Armenian**).
14. “Zhamanakakits‘ hayots‘ lezvi bats‘atrankan bararan”, hat. 4, Yer., Haykakan SSH gitut‘yunneri akademiayi hrat., 1980, 828 ēj (**In Armenian**).
15. **Abrahamyan A.**, Grabari dzernark, 4-rd hrat., Yer., “Luys”, 1976, 560 ēj (**In Armenian**).
16. **Acharyan H.**, Liakatar k‘erakanut‘yun hayots‘ lezvi, hamematut‘yamb 562 lezneri, Neratsut‘yun, Yer., Haykakan SSR GA hrat., 1955, 656 ēj (**In Armenian**).
17. **Agat‘angeghos**, Hayots‘ patmut‘yun, ashkharhabar t‘argmanut‘yunə yev tsanot‘agrut‘yunnerə: **A. Ter-Ghevondyani**, Yer., Yerevani hamalsarani hrat., 1983, 552 ēj (**In Armenian**).
18. **Aghayan Ē.**, Ardi hayereni bats‘atrankan bararan, Yer., “Hayastan”, 1976, 1616 ēj (**In Armenian**).
19. **Aghayants‘ Yovh.**, K‘erakanut‘iwn haykakan lezui, Moskva, tp. Lazarean chemarani, 1839, 120 ēj (**In Armenian**).
20. **Akopjan A.**, Albanija-Aluank v greko-latinskix i drevnearmjanskix istochnikax, Jer., izd. AN Armjanskoj SSR, 1987, 304 s. (**In Russian**).
21. **Arak‘elyan V.**, Aknarkner hayots‘ grakan lezvi patmut‘yan (V dar), Yer., Haykakan SSH GA hrat., 1981, 216 ēj (**In Armenian**).
22. **Arak‘elyan V.**, Hingerord dari hay t‘argmanakan grakanut‘yan lezun yev vochē, Yer., Haykakan SSH GA hrat., 1984, 231 ēj (**In Armenian**).
23. Astuatsashunch‘ Girk‘ Hin yew Nor Ktakaranneru, yebrayakan yew yunakan bnagirnerēn t‘argmanuats, Beyrut‘, Astuatsashunch‘i miats‘eal ēnkerut‘yunner, 1981, 1572 ēj (**In Armenian**).
24. Astuatsashunch‘ Girk‘ Hin yew Nor Ktakaranneru, yebrayerēn yew yunarēn bnagirnerēn t‘argmanuats, Beyrut‘, Libanani Astuatsashunch‘i ēnkerut‘yun, 2001, 1698 ēj (**In Armenian**).
25. Astuatsashunch‘ matean Hin yew Nor Ktakaranats‘, Yer., Hayastani astvatsashnch‘ayin ēnkerut‘yun, 1997, 1460 ēj (**In Armenian**).
26. Astuatsashunch‘ Matean Hin yew Nor Ktakaranneri, Mayr At‘or Surb Ējmiatsin, Hayastani astuatsashnch‘ayin ēnkerut‘yun, 1994, 1698 ēj (**In Armenian**).
27. Astuatsashunch‘ Matean Hin yew Nor Ktakaranneri, yebrayakan yew yunakan bnagirnerits‘ t‘argmanuats, Shtutgart, Surb Grots‘ ēnkerut‘yunner, 1989, 1424 ēj (**In Armenian**).
28. Astuatsashunch‘. Nor Ktakaran Yisusi K‘ristosi, nor ashkharhabar t‘argmanut‘iwn, hamematut‘eamb Yunarēni yew Grabari, Ant‘ilias, Metsi Tann Kilikiyoy kat‘oghikosut‘ean hrat., 1993, 920 ēj (**In Armenian**).
29. Astvatsashunch‘ Matyan Hin yew Nor Ktakaranneri, t‘argmanut‘yun (Nor Ararat), Yer., Hayastani astvatsashnch‘ayin ēnkerut‘yun, 2018, 1210 ēj (**In Armenian**).
30. Astvatsashunch‘. Nor Ktakaran Hisusi K‘ristosi, ashkharhabar nor t‘argmanut‘yun, Yer., Hayastani astvatsashnch‘ayin ēnkerut‘yun, 2001, 720 ēj (**In Armenian**).
31. **Avetisyan H.**, Voroshich‘-voroshyalı kapakts‘ut‘yunə grabarum, Yer., Yerevani hamalsarani hrat., 1972, 152 ēj (**In Armenian**).

32. **Barseghyan H.**, Hayeren ughghagrakan-ughghakhosakan-terminabanakan bařaran, Yer., “Luys”, 1973, 980 ėj (**In Armenian**).
33. **Chĕrĕchean G. ark’.**, **Tĕnikean P’.**, Hayots’ lezui nor bařaran, hat. 1, Pĕyrut’, “K. Tĕnikean yew Vordik’” hratarakch’atun, 1992, 1306 ėj (**In Armenian**).
34. **Chizmĕchean P. vrd.**, Hayerĕn ashkharhabar lezui liakatar bařaran, hat. 2, Halĕp, tp. “Ani”, 1957, 1460 ėj (**In Armenian**).
35. **Gabamachean S.**, Nor bařagirk’ hayerĕn lezui, K. Pĕlis, tp. “R. Sagayean”, 1910, 1414 ėj (**In Armenian**).
36. **Ghazar P’arpets’i**, Hayots’ patmut’yun, T’ught’ Vahan Mamikonyanin, ashkharhabar t’argmanut’yunĕ yew tsanot’agrut’yunnerĕ: **Bagrat Ulubabyani**, Yer., Yerevani hamalsarani hrat., 1989, 540 ėj (**In Armenian**).
37. **Ghazaryan R.**, Grabari bařaran, hat. 1, Yer., Yerevani hamalsarani hrat., 2000, 687 ėj, hat. 2, Yer., Yerevani hamalsarani hrat., 2000, 660 ėj (**In Armenian**).
38. **Gyurjinyan D.**, Hreaneri lezvi hayeren anunnerĕ yew drants’ tarberaknerĕ, “Hayagitakan handes”, Yer., 2021, N 4, ėj 3-17 (**In Armenian**).
39. **Gyurjinyan D.**, Hreaneri lezvi hayeren anunneri yew drants’ tarberakneri bařaranayin mshakman patmut’yunĕ, “Banber hayagitut’yan”, Yer., 2021, N 3, ėj 216-231 (**In Armenian**).
40. **H. Gabriĕl Awetik’ean, h. Khach’atur Siwrmĕlean, h. Mkrtich’ Awgerean**, Nor bargirk’ haykazean lezui, hat. A, Venetik, S. Ghazar, 1836, 1140 ėj, hat. B, Venetik, S. Ghazar, 1837, 1067 ėj (**In Armenian**).
41. **Hakobyan T’.**, **Melik’-Bakhshyan St.**, **Barseghyan H.**, Hayastani yew harakits’ shrjanneri teghanunneri bařaran, hat. 1, Yer., Yerevani hamalsarani hrat., 1986, 992 ėj (**In Armenian**).
42. **Hovhannisyan L.**, Bařeri meknut’yunnerĕ hingerord dari hay matenagrut’yan mej, Yer., HH GAA “Gitut’yun” hrat., 2016, 156 ėj (**In Armenian**).
43. **Hovhannisyan L.**, Grabari bařapasharĕ (V dar), Yer., HH GAA hrat., 2006, 310 ėj (**In Armenian**).
44. **Hovhannisyan L.**, Grabari bařaran. Nor haykazyan bařaranum ch’vkayvats bařer, Yer., “Ēdit’ Print”, 2010, 294 ėj (**In Armenian**).
45. **Hovsep’yan L.**, Grabari bařakazmut’yunĕ, Yer., Haykakan SSH GA hrat., 1987, 376 ėj (**In Armenian**).
46. **Hovsep’yan L.**, Razmakan bařapasharĕ Movses Khorenats’u “Patmut’iwn Hayots’” yerikum, “Vĕm”, Yer., 2018, N 3, ėj 105-151 (**In Armenian**).
47. **Jahukyan G.**, Hayots’ lezvi patmut’yun. nakhagrayin zhamanakashrjan, Yer., Haykakan SSH GA hrat., 1987, 748 ėj (**In Armenian**).
48. **Jahukyan G.**, K’erakanakan yew ughghagrakan ashkhatut’yunnerĕ Hayastanum (V-XV dd.), Yer., Yerevani hamalsarani hrat., 1954, 396 ėj (**In Armenian**).
49. **Jakhjakhean M. vrd.**, Bargirk’ i barbař hay yew italakan, Venetik, S. Ghazar, 1837, 1535 ėj (**In Armenian**).
50. **Khach’atryan L.**, Grabari bats’atrankan bařaran (dzevabanakan tararzhek’ bařer), Yer., “Zangak-97”, 2003, 384 ėj (**In Armenian**).
51. **Khudabashyan Al.**, Hay-řuseren bařaran, hat. 1, Yer., Yerevani hamalsarani hrat., 1986, 652 ėj, hat. 2, Yer., Yerevani hamalsarani hrat., 1987, 538 ėj (**In Armenian**).
52. **Koryun**, Vark’ Mashtots’i, Yer., Yerevani hamalsarani hrat., 1980, 364 ėj (**In Armenian**).
53. **K’osyan V.**, Grabari bařakapakts’ut’yunnerĕ, Yer., Haykakan SSH GA hrat., 1980, 280 ėj (**In Armenian**).

54. **Malkhaseants' St.**, Hayerēn bats'atrankan baṙaran, hat. 1, Yer., Haykakan SSR petakan hrat., 1944, 608 ēj, hat. 3, Yer., Haykakan SSR petakan hrat., 1944, 614 ēj, hat. 4, Yer., Haykakan SSR petakan hrat., 1945, 648 ēj (**In Armenian**).
55. **Mkrтч'yan Ēd.**, Hetadas voroshch'i gortsatsut'yuně grabarum, "Banber Yerevani hamalsarani", Yer., 1998, N 3, ēj 155-166 (**In Armenian**).
56. **Movses Khorenats'i**, Hayots' patmut'yun, ashkharhabar t'argmanut'yuně yev meknabanut'yuně: **St. Malkhasyani**, Yer., Yerevani hamalsarani hrat., 1981, 588 ēj (**In Armenian**).
57. **Movses Khorenats'i**, Patmut'yun Hayots', K'nnakan bnagirě yew neratsut'iwně: **M. Abegheani yew S. Yarut'iwneani**, Yer., Haykakan KSHS GA hrat., 1991, 486 ēj (**In Armenian**). **Khorenats'i**, Patmut'yun Hayots', t'argmanut'yuně, neratsut'yuně yev tsanot'agrut'yunnern akademikos **St. Malkhasyants'i**, Yer., "Hayastan", 1968, 420 ēj (**In Armenian**).
58. Nor Ktakaran, arewelahayerēn nor t'argmanut'iwn, Mayr At'or Surb Ējmiatsin, 1975, 712 ēj (**In Armenian**).
59. Nor Ktakaran, arewmtahayerēn nor t'argmanut'iwn, Yerusaghēm, Astuatsashunch'i miats'eal ēnkerut'yun, 1981, 760 ēj (**In Armenian**).
60. Nor Ktakaran, Pēyruť, Hay Katoghikē patriark'arani artonut'eamb, 1982, 762 ēj (**In Armenian**).
61. **P'avstos Buzand**, Hayots' patmut'yun, t'argmanut'yuně yev tsanot'agrut'yunnerē: **St. Malkhasyants'i**, Yer., Yerevani hamalsarani hrat., 1987, 456 ēj (**In Armenian**).
62. **Petrosyan H., Galstyan S., Gharagyulyan T'.**, Lezvabanakan baṙaran, Yer., Haykakan SSH gitut'yunneri akademiayi hrat., 1975, 318 ēj (**In Armenian**).
63. Surb Awetaran Yisusi K'ristosi, ashkharhabar t'argmanut'iwn, ashkhatasirets': **h. Srapion ark'. Uluhochean**, Venetik, S. Ghazar, 1989, 668 ēj (**In Armenian**).
64. **Trever K.**, Ocherki po istorii i kul'ture Kavkazskoj Albanii IV v. do n. e. – VII v. n. e., M.-L., izd. Akademii nauk SSSR, 1959, 389 s. (**In Russian**).
65. **Yeghishē**, Vasn Vardanay yew Hayots' paterazmin, Yer., Yerevani hamalsarani hrat., 1989, 448 ēj (**In Armenian**).
66. **Yewsebiosi Kesarats'woy** Patmut'iwn yekeghets'woy yegheal yasorwoyn i hay i hingerord daru, parzabaneal nor t'argmanut'eamb i yoyn bnagrēn, i dzeṙn H. Abraham v. Charean, Venetik, Surb Ghazar, 1877, 773 ēj (**In Armenian**).
67. **Yeznik Koghbats'i**, Yeghts aghandots', t'argmanut'yuně yev tsanot'agrut'yunnerē: **A. A. Abrahamyani**, Yer., Yerevani hamalsarani hrat., 1994, 348 ēj (**In Armenian**).
68. **Yovhannisean L.**, Hay t'argmanakan grakanut'ean baṙapasharē (V dar), Yer., Yerevani hamalsarani hrat., 2007, 229 ēj (**In Armenian**).